№ 10 (187) XVII ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԳՈՐԾԻ ՊՐՕՊԱԳԱՆԴԸ

Այո՛, անշուշտ։ Անցած պէտք է համարել նոյնիսկ մեր դրացի տաճիկների համար այն մեղկ ու անհրապոյր շրջանը, երբ նրանց ազատամիտ պարագլուխները —մի-մի զօրավարներ, առանց զինուորների—աղմկում էին մթնոլորտը յեղափոխական անզօր, միակերպ ֆրազէօլօգիայով։ Նրանք համարեա գարշում էին կենդանի գործից, նրանց կարմրագոյն կեղևների տակ թագնուած էին առաձգական, վեհերոտ հոգիներ, որոնց գերագոյն տենչանքն էր՝ առաջ բերել հայրենիքի վերածնութեան գործը, առանց արիւնի, առանց զոհողութեան։ Եւ իրենց հոգեկան կազմի համեմատ նրանք մի առանձին յափշտակութեամբ իւրացնում էին արևմտեան այն վարդապետութիւնները, որոնք դարձել են բոլոր մեղկացած, բուրժուազացած մարդկանց դաւանանքը, որոնք ճառում են ինչ որ անարիւն յեղափոխութիւնների, ինչ որ „խաղաղ" հասարակական էւոլիւցիայի մասին, որոնք կը պնդեն ձեզ մի անխռով ու դատարկամիտ վստահութեամբ, թէ համաշխարհային Մեծ Յեղափոխութիւնն էլ կատարել են Վօլտերներն ու Ռուսսոները իրենց գրիչներով և ոչ ժողովուրդը իր արիւնահեղ երերումներով, թէ այդպէս են եղել բոլոր ազգերի յեղափոխութիւնները, թէ արիւնը գարշելի բան է, անբարոյական, թէ բնութիւնը չի սիրում արիւն, թէ տիեզերքը մի ներդաշնակ ամբողջութիւն է—մի „նախասահմանուած ներդաշնակութիւն", ուր չը կայ կռիւ, չը կայ մրցութիւն, թէ մարդկային հասարակութիւնը ևս կառավարւում է նոյն տիեզերական ներդաշնակութեան օրէնքներով ևայլն ևայլն... Լայբնիցն ու Կանտը շարունակում են իրենց թովիչ հմայքն ունենալ բոլոր խոհեմների, հակայեղափոխականների աչքում, չը նայած այն մեծ յեղաշրջմանը, որ կատարուել է 50 տարուց իվեր բնագիտութեան ու հասարակագիտութեան մէջ և որը ուսուցանում է պարզ ու յստակ տքսիսմի պէս՝ որ այսպէս կոչուած „տիեզերական ներդաշնակութիւնը" մի հոյակապ պատրանք է միայն, որ կռիւն է տիեզերքը կառավարող երկաթէ օրէնքը, որ բնութեան մէջ, արտաքուստ ժպտուն, հմայիչ ու „ներդաշնակ" այդ բնութեան մէջ, նրա հսկայական ծալքերում, նրա ծովերի ու ովկեանների անդունդներում ամեն վայրկեան մղւում են վիթխարի ճակատամարտներ և բիւրաւոր կենդանի էակներ՝ յաղթահարած, ուժասպառ՝ կուլ են գնում իրենցից աւելի հզօրներին... *Vae victis!*... Բուն դրական, փորձի վրայ հիմնուած գիտողութիւնը ցոյց տուեց և այն՝ որ այդ կռիւը օրէնք է նաև մարդկային հասարակութիւնների մէջ, որոնք ապրում են տիեզերքում և հետևապէս ենթակայ են նրա անողորմ դիսցիպլինին, որ այդտեղ օբեկտիվ կեանքում, մարդկային բոլոր համախմբումների մէջ, ա ն կ ա խ Վ օ լ տ ե ր ն ե ր ի ց ու Ռ ու ս ս օ ն ե ր ի ց՝ կայ կռիւ դասակարգերի մէջ, կայ կռիւ ազգերի ու անհատների միջև, կայ շահերի մշտնջենական հակամարտութիւն, կայ անհաւասար ուժերի բաղխում, որ Վօլտերները մի յայտնի չափով անդրադարձումն են այդ դրութեան, որ այդ կռիւը չի ջնջւի ոչ մի թէօրիայով, ոչ մի խորիմաստ ֆօրմուլայով, որ թէօրետիկոսը ստիպւած է արձանագրել այն և եթէ ուզում է ըէֆօրմատօրի, վերանորոգչի դեր ստանձնել, պիտի աշխատէ ձևակերպել ու ո ր ո շ ո ւ ղ ղ ո ւ թ ի ւ ն տ ա լ այդ կռիւին, որպէսզի նա տարերային ու ճակատագրական զօրութիւնից դառնայ դրական, նպատակաւոր ու արդասաւոր մի գործօն։

Այդ է եղել միշտ քաղաքական ու հասարակական շարժումների մտաւոր ռահվիրաների պաշտօնը։ Արտակարգ հոտառութեամբ օժտւած՝ նրանք միշտ և ամեն տեղ կարողացել են, այսպէս ասած, կանխել ժամանակը և ձևակերպել այն, ինչ որ դեռ գոյութիւն ունի սաղմային վիճակում, այն, ինչ որ միայն ապագայի իրողութիւն է։ Թիւրքական շարժման թէօրետիկոսները կարծես մի տեսակ բացառութիւն են կազմում այդ համատարած օրէնքից։ Նրանք յամառութեամբ ուզեցին դէմ գնալ իրական կեանքի ֆակտօրներին։ Նրանք քարոզեցին խաղաղ, անարիւն առաջադիմութիւն, իսկ իրականութիւնը ճչաց նրանց՝ „կռի՛ւ"։ Նրանք տարուեցին „Կանտ-Լայբնիցեան" ծոյլ օպտիմիզմով և գարշելով յեղափոխական գ ո ր ծ ի պ ր օ պ ա գ ա ն դ ի ց, քարոզեցին քսան տարուց իվեր, թէ ամեն բան լաւ կ'երթայ „աշխարհներից լաւագոյնի մէջ",—Ցաճկաստանում, թէ „ներդաշնակութիւնը" կատարեալ կը լինի լայնածաւալ հայրենիքում—հարկաւոր և միայն... գահընկեց անել

Աբդիւլ-Համիդին... Միամիտ լաւատեսութիւնը անգիտանում էր, որ անհատների, նոյնիսկ թագակիր անհատների կամքը չէ միայն, որ շղթայում է ժողովուրդների ճակատագիրը, որ կան ուրիշ կարգի ճնշումներ—բիւրօկրատական-քաղաքական, կրօնա-կղերական, դասակարգային-տնտեսական և այլն։ Մեր դրացիների մտաւոր պարագլուխները շոգիացնում էին այդ բոլորը „կարգի ու առաջադիմութեան“ ուտոպիայի մէջ և ահա կարծես դրան ի պատասխան, այսօր Էրզրումի յուզած ամբոխը, տաճիկ ամբոխը, ըմբոստացումի մի գեղեցիկ ժեստով Լինչի օրէնքին է ենթարկում իր իսկ ցեղակից աղաներին, որոնք ամբարել են հացահատիկները, գինը բարձրացրել և ժողովրդին մատնել են սովի ճիրաններին։ Ահա մի շարք նման խլրտումներ կայսրութեան ուրիշ ծայրերում։ Դա արդէն տնտեսական, դասակարգային կռուի արտայայտութիւն է. դա սոցիալիստական ըմբոստացումն է, թէև տակաւին անգիտակից ու անկազմակերպ... Ո՞ւր են մնում „խաղաղ առաջադիմութեան“ նէյնիմները... Ժողովուրդը շարժուեց և զուտ քաղաքական հողի վրայ, մի շարք փայլուն ու արիւնահեղ ցոյցերով նա ապացուցեց, որ ինքը աւելի հասունացած է, քան իր շէֆերը։ Վերջիններս ստիպուած են համակերպել, նրանք ստիպուած են դասեր առնել ժողովրդից և շատ չի անցնի, մենք համոզուած ենք, նոյնիսկ ազատամիտ այն օրգանները, որոնք մինչև օրս հնչեցնում էին ա ն ա ր ի ւ ն շ ա ր ժ մ ա ն նշանաբանը, կեանքի հրամայական պահանջների տակ՝ կը գրեն իրենց ճակատներին բոլոր դարերի յեղափոխականների սիրած լօզունգը՝ „կռուի մէջ միայն կը վաստակես քո իրաւունքները“։ Նշանները երևում են արդէն։ Թիւրք ազատամիտ օրգանները դառնում են աւելի բովանդակաւոր, աւելի կարմիր, թիւրք պարագլուխները յարմարեցնում են իրենց քաղաքական հաւատամքը իրենցից աւելի առաջ գնացած իրականութեան...

Եւ մենք ուրախ ենք այդ փոփոխութեամբ։ Ժամանակ է, գերագոյն ժամանակ։ Եթէ նա մի 15 տարի սրանից առաջ տեղի ունենար,—տարակոյս չը կայ, որ մեր ընդհանուր հայրենիքը այսօր բոլորովին այլ պատկեր կունենար։

Կռիւը այդպիսով դառնում է նշանաբան։ Նրանով տոգորուում է ոչ միայն մասսան, այլ և մտաւոր ղեկավարները։ Նրանք չեն խորշում „միջոցներից“. ամեն բան լաւ է նրանց աչքում, միայն թէ փութացնէ բռնակալութեան խորտակման ժամը։ Ամեն բան լաւ է նրանց համար—և՛ դաւադրութիւնը, և՛ մասսային, արիւնոտ ցոյցերը, և՛ ռումբն ու ատրճանակը։ Մինչև օրս նրանք առաքեալներ էին թղթի պրոպագանդի, այսուհետև նրանք քարոզիչներ են բուն, կենդանի գ ո ր ծ ի պ ր օ պ ա գ ա ն դ ի... Դէպի իրականութի՛ւն, կեցցէ՛ ռէալիզմը...

Այդ փրկարար մետաֆօրմօզի մէջ թիւրքական շարժման իդէօլօգները սովորում են տիեզերական էւոլիւցիայից ու պատմութեան փիլիսոփայութիւնից նաև մի այլ բան։ Նրանք իւրացնում են ոչ միայն կռուի, այլև նրա լրացուցիչ հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա ն օրէնքը։ Եթէ բնութեան և հասարակութեան մէջ թագաւորէր միայն, ինչպէս ասում են, „կռիւ բոլորի ընդդէմ բոլորի“—դա կը լինէր մի զարհուրելի, դժոխային քաոս, անէութիւն։ Բայց կան ամեն տեղ, և անասնական տեսակների և մարդկային համախմբումների մէջ, շահերով նմաններ, որոնք միանում են, որպէս զի կարողանան աջողութեամբ կռուել ու յաղթանակել։

Հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա ն այդ օրէնքը, որ համազօր է կ ռ ւ ի օրէնքին, ցոյց է տալիս իր յարաճուն զօրութիւնը մարդկային հասարակութիւնների զարգացման ընթացքում, ուր գոյութեան կռուի զոհերը,—համայն աշխարհի իրաւազուրկ, աշխատաւոր բանակները—փոխանակ ընկճուելու արտօնաւորեալ „հզօրների“ հարուածներից, կազմակերպւում են ներկայումս ի մի յաղթական ու ներդաշնակ ամբողջութիւն և պատրաստւում են մեծ ապագայի նուաճման համար։ Ահա թէ որպիսի հրաշքներ է գործում համերաշխութեան օրէնքի ոյժը... Ամեն մի բռնութիւն պատմութեան մէջ անհամեմատ աւելի է տևել, քան կարող էր տևել—և դրա պատճառը լոկ համերաշխութեան հրաշագործ ոյժի բացակայութիւնն է եղել բռնակալութեան զոհերի միջև... Որքա՜ն տարրական, դիւրըմբռնելի ճշմարտութիւններ խոյս են տուել դարերի ընթացքում ժողովուրդների ու նրանց մտաւոր առաջնորդների ըմբռնողութիւնից և որքա՜ն դրանից քաջալերուել են բռնաւորները... Եւ գուցէ ոչ մի տեղ, երկրագնդի ոչ մի անկիւնում այդ սարսափելի իրողութիւնը չի արտայայտուել այնքան աւերիչ հետևանքներով, ինչպէս մեր երկրում։ Այդտեղ, անշուշտ, ցեղական տեմպերամենտը և մանաւանդ ազատագրական աւանդութիւնների բացակայութիւնը մեր դրացիների մէջ, խաղացել են իրենց ողբալի դերը... Հարկաւոր եղան անթիւ անհամար զոհեր, մասսային բուռն ըմբոստացումներ ամբողջ ասիական արևելքում, որպէսզի օսմանեան շարժման ղեկավարները սթափուէին իրենց լէթարգիական քնից, որպէսզի նրանք հասնէին բուն յեղափոխական գիտակցութեան և ընդունէին կռիւը, իբրև ազատութեան գերագոյն միջոց։ Հարկաւոր եղան նոյնպիսի արեան հեղեղներ և մօտ 20 տարուայ կոչ ու յորդոր հայ յեղափոխական մարտիկների կողմից, որպէսզի մեր դրացի մուսուլման հայայնքը, յանձին իր կրթուած ու առաջադէմ պարագլուխների, զգար, վերջապէս համերաշխ կռուի բարիքները, հայ-մահմեդական գործակցութեան անհրաժեշտութիւնը։

Ուշ, քան երբէք... Եւ այս դէպքում ևս, թւում է

թէ պարզ ամբոխն էր, թիւրք աշխատաւոր ժողովուրդն էր, որ կանխեց իր շէֆերին, ինքն առաջինը հնչեցնելով համերաշխութեան քարոզը։

Այսօրւայ մեծ, ուրախառիթ նորութիւնն այն է, որ այդ համերաշխութիւնը դուրս է գալիս արդէն տեսական հողից և ընդունում է գործնական արտայայտութիւններ։ Խօսքին հետևում է գործ, և արիւնոտ յեղափոխական գործ։ Հայ-տաճկական դաւադրութիւնը, դեռ երիտասարդ, դեռ համարեա խանձարուրի մէջ, սկսում է արդէն հալածել բիւրօկրատիայի արիւնարբու ներկայացուցիչներին և արդէն իսկ մի քանիսին գերեզման իջեցրեց։ Վանում ընդհանուր որոշմամբ սպանեցին ոստիկանութեան ագենտներ, ինչպէս և թիւրք-հայկական կոմիտէի վճռով տերրորի ենթարկուեց արտասահմանում Վասպուրականի պատուհաս դարձած հռչակաւոր Ալի-բէյը։ Այդ գործողութիւնները իրենց փոքրութեան, համեստութեան մէջ թերևս աւելի նշանակիչ են, քան ամբոխային յուզումները այլ և այլ կողմերում։ Երկու ժողովուրդների գործակցութիւնը,—որոնցից մէկը բախտի բերմամբ աւելի բարձր կուլտուրական նուաճումներով, աւելի մարզած ազատագրական կռւի դպրոցում՝ կոչած է որոշ չափով դաստիարակչի դեր ստանձնելու միւսի վերաբերմամբ—դա մի իրողութիւն է, որ անգնահատելի արժէք ունի երկրի հիմնական բարեկարգման տեսակէտից։ Եղած փաստերը գրաւական են, որ այդ գործակցութիւնը գնալով աւելի պիտի զօրանայ, աւելի սերտ կերպարանք պիտի առնէ, Աբդիւլ-Համիդի մակեավէլիզմը էլ զուր կը ճգնէ բաժանել երկու տարրերը և նորից գրգռել իր հաւատակիցներին „գեավուրների“ դէմ։ Երկրի աղը, մուսուլմանների ու քրիստոնեաների լաւագոյն մասը, ուխտել է անսասան համերաշխութիւն գործի պրոպագանդի հողի վրայ և յուսով ենք, որ հայ-տաճկական գինակցութիւնը կը ստանայ շուտով իր գերագոյն սրբագործումը ազատագրական կռւի դաշտում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԲԱՂԷՇԻ ԾՐՋԱՆԸ

—

ԲԱՂԷՇ, Օգոստոս 5

Կուսակալութեան մէջ կատարեալ անիշխանութիւն կը տիրէ, ճամբաները անապահով, թռչունն իսկ անվտանգ չկրնար անցնիլ։ Քիւրդերը, օգտուելով դրութենէն, կը թալանեն անպաշտպան գեղերը և իրար կը գզեն։ Զօրքերը խմբովին միայն կը համարձակին ճամբորդել, ոստիկանները առանց զէնքի և հազար ու մէկ դժուարութիւններով կը շրջին զէնքերնին չը կորսնցնելու և քիւրդերու զայրոյթը չը գրգռելու համար։ Փոքր պաշտօնեաները կանիծեն իրենց մեծերը որ այս խայտառակ դրութեան մէջ կը շարունակեն պաշտօնի վրայ մնալ։ Պաշտօնական գործադուլ պէտք է կըսեն։ Պաշտօնեաները կը սարսափին ժողովուրդէն։

Պուրանըխի և Խլաթի հայ գիւղերը ասպարէզ դարձած են քիւրդ և այլ աւազակներու շահատակութիւններուն։ Մայիսէն ասդին հարստահարութիւնները այն աստիճանի հասած են, որ հիւպատոսները, հակառակ իրենց համբաւեալ անտարբերութեան, ստիպուեցան քննութիւն ընել և ահռելի կացութիւնը պարզել։ Հարկահանութեան խայտառակ սիստէմը, հայապատկան հողերու և արտերու օտարացումը, իսլամ գաղթականներու տեղաւորումը հայ գիւղերու մէջ և հայ գիւղացիներու բռնի տարագրումը քիչ ցնցեցին եւրոպական ներկայացուցիչները։ Բաղէշի Ռուսիոյ և Անգլիոյ հիւտատոսները, իրենց դեսպաններու հաւանութիւնով, նոր կուսակալ Թահիր փաշային ծանուցագիր մը տուին՝ ինը յօդուածէ բաղկացած։ Առաջին արդիւնքը այն եղաւ, որ հայ գիւղացիին արտօնեցաւ ինք գնելու իր գիւղին տասանորդը։ Եթէ այս տարրական բարեփոխութիւնը շարունակուի, հայ գիւղացին կարելի է ազատած համարել իր արիւնը ծծող մէկ ճիւաղէն—միւլթէզիմէն։

Սղերդի չորս գաղաներն ալ գրաւոր ազդարարած են կառավարութեան որ գիւղերու աշարը (տասանորդ) հաւաքելու համար պաշտօնեայ և հարկահաւաք չը դրկեն գիւղերը. „կառավարութիւնը ո՞ր իրաւունքով մենէ տասանորդ և այլ տուրքեր կը պահանջէ. բան չենք տար“. կը պոռան։ Պօհթանի ճիզրէ գիւղաքաղաքն ալ „փարա“ մը տուրք և նէֆէր (զինուոր) չը տալու որոշումը և ազդարարութիւնը ըրած է։

Իմացաք կուսակալ Ֆէրիդին բէզիլ ըլլալը։ Պիթլիսցիք, զորս դու պատուիրեցեր, ծեծփէտ մը տալով կը վիրաւորեն զինքը և կսպաննեն իրեն հաւատարիմ գործիք եղող հայ գօմիսէր Զէքին, կը թալանեն նաև վալիի տունը։ Զինուորներու գնդակով կսպանուի ժողովրդէն տաճիկ երիտասարդ մը, որ բացէ ի բաց կը պոռար թէ պիտի երթայ Ֆէրիդը դաշոյնով շանսատակ ընէ։

Բէզիլ Ֆէրիդը այսպէս հեռագրած է իր սուլթանին. „Ես անմեղ, ժողովուրդը անմեղ, թելագրիչը յայտնի է, գթութեանդ ապաւինած եմ“, (թելագրիչը Դ. զօրաբանակի հրամանատար Զէքի փաշային կակնարկէ)։

Վերջի 4—5 տարւայ մէջ Սղերդի գաւառին մէջ աւերուած գիւղերի, սպաննուած քրիստոնեաների թիւն է՝

Գպզա	Աւերուած գիւղ	Սպաննուած անձ
Ղարզան	76	46
Շիրվան	25	15
Էրուհ	36	15
Պէրվարի	23	16
Շրջականներէն . . .	2	16

Սպաննուած քրդերի թիւը անհամեմատ աւելի է։ Վանայ, Էրզրումի և Պիթլիսի երբեակ կուսակալութեան բարեկարգութեան համար ութ վաշտ զօրքի այս կողմերը գալու զրոյցը կը շրջի։

Ժողովրդական խլրտումները կազմակերպուած մարմինների ձեռքով չը կատարուելուն և չը ղեկավարուելուն, կը կասկածինք որ անհետևանք մարին։ Գիտակից տար-

բերի սով կը տիրէ։ Իսլամ տարրը դեռ բոլորովին չէ բարեշրջած իր վերաբերմունքը դէպի քրիստոնեան։

Ձեզի կը ղրկենք երեք կտոր պաշտօնական հեռագիրների թիւրքերէն և հայերէն պատճէնները, որոնք իրաց կացութեան վրայ բաւական լոյս կը սփռեն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Վսեմ. Մեծ-Եպարքոսութեան,

Կ. Պոլիս

Մեր Նահանգին մէջ գտնուող հաւատարիմ ժողովրդեան՝ անպատիժ ու վերջին ծայր շփացած-լրբացած աշիրէթներուն ձեռքէն կրած հարստահարութիւններն այլեւս վերջին աստիճանի հասած են. սպաննուողներուն թիւ ու հաշիւ չը կայ. քիւրդերուն ամէն ժամուան մէջ և ամեն կողմ համարձակ իգործ դրած տեսակ-տեսակ չարագործութեանց երեսէն՝ քրիստոնեաները այլեւս իրենց կեանքին, հողին, ինչքին, պատուոյն տէրը չեն. չարագործները ճամբաները կտրած ըլլալուն համար ներածութիւն և արտածութիւն դադրած՝ գիւղօրէից բնակչութիւնն ալ քիւրդերու ճնշման տակ իրենց ցանքերն վերցնելու այլեւս անկարող են։ Այլուր գաղթելու մտադրութիւնին գործադրելու վրայ են։—Վեհ. կայսեր կամքին հակառակ եղող քիւրդերուն այս արարքներն արգիլելով՝ հանրութեան անդորրութիւնը վերահաստատելու շուտափոյթ միջոցի գործադրութեան համար կայս. անվերջ գթութեանց ապաւինելով՝ ի դիմաց ժողովրդեան ձեր վսեմութեան հրամանին կը սպասենք։

Ասորոց պատ. Փոխանորդ

Հայոց առաջնորդ Սղերդի կաթուղիկոս Եպիսկոպոս

Տրապիզոնի կուսակալ Վսեմ. Թահիր փաշային,

Բաղէշ

Համեստ ժողովուրդին կրած հարստահարութեանց և այլ պարագայից մասին արդարութիւն իգործ դրելու համար՝ յունիս 18 թուականաւ Բարձր. Դրան քաշած մեր հեռագրէն ցարդ որևէ արդիւնք չ'երևցաւ. ժողովուրդն անվերջ կեղեքումներէն վերջին ծայր յուսահատած՝ անդորրութիւնն ալ վրդոված ըլլալուն՝ դեռ գաղթելու չը ձեռնարկած հարկ եղած միջոցներուն գործադրութիւնն ձեր գթութեան ապաւինելով կը խնդրենք։

Ասորագրութիւն (Նոյնի)

Վսեմ. Մեծ-Եպարքոսին.

Կ. Պոլիս

Կայսերական կառավարութեան երկիրներու օրըստօրէական յառաջդիմութիւնն երբ պարծանքով կը դիտէինք, ցաւ է մեզ յայտնել՝ թէ կարգ մը պաշտօնէից երկրին յառաջադիմութեան և Աստծոյ կամաց հակառակ ընթացից մէջ գտնուելնուն պատճառով, մեր կուսակալութեան ամէն կողմերն տակաւ առ տակաւ աւրուեցան և ներկայ վայրին անկարգ ղեկավարութենէն բու և ագռաւի բնակավայր դարձան։ Կուսակալութիւնը կազմող երեք գաւառներէ մին՝ Սղերդի գաւառին 20 տարի առաջ դիւրութեամբ գանձուող 80000 ոսկիի հասոյթը, այսօր դժւարագանձելի 20000-ի իջնելուն պարագան եթէ լուրջ նկատողութեան առնուի, կուսակալութեան տագնապի աստիճանը կրնայ մակաբերուիլ։—Այս տագնապալի վիճակը „անուշ տեղ կապելու“ դրութեան՝ էն հասարակ ոճրագործին նկատմամբ ի գործ դրուելէն և պաշտօնէից թուլութենէն և պատժոյ արժանի եղողներուն վայել պատիժը չը տրուելէն յառաջ եկած ըլլալու է, որ այսօր կուսակալութեան ամէն կողմ գտնուող էն հասարակ աշիրէթն ալ ապստամբելով՝ նոր զօրքերու հաւաքման և ոչխարահամարի ու մարդահամարի գացող պաշտօնեաները կը ծեծեն, կը խայտառակեն և իրաց անդորրութիւնը վրդովելով հանդերձ իրենց այս ընթացքը պարզ յանցանքի աչքով կը դիտուի, որուն համար կուսակալութեան ամէն անկեան մէջ ապահովութիւնն ու խաղաղութիւնը վերցուած, ճամբաները կտրուած և ծայրաստիճան կործանում ու քայքայումի նշաններն ծայր տալ սկսած են։ Քիւրդերը շփանալով ապերախտ դարձած են. այդ ատելիները զսպել, հնազանդութեան բերել և երկրին անդորրութիւնը վերահաստատելը փոքր ձեռնարկի մը կը կարօտի, նոյնիսկ այսօր կուսակալութեան կեդրոնին մէջ տեղի ունեցած այդ անտեղութիւնն ատոր հետ կապակախում ունի։ Եթէ ժողովուրդը շուտով չը փրկուի, եթէ իրենց շահու շրջանակը լայնցնելու գաղուռ նպատակով զէնքով դէմ-դէմի կայնած այդ աշիրէթներն ու հրոսակախմբերը չը պատժուին շուտով, նոյնիսկ արդի խեղճ ու կրակ վիճակն ալ իսպառ կը խաթարի, անտարակոյս։ Ժողովրդեան այս վիճակը իր աչքով տեսած և բարուքելն իրեն կէտ-նպատակի ըրած մեր Նահանգին կառավարիչ՝ Հիսամ-էտ-տին փաշան կուսակալութեան կողմէ չը լսելուն համար, արտօնութեամբ 3—4 օր առաջ ասկէ հեռանալու պարագան նեաստիս յայտնած ճշմարտութեան զօրաւոր ապացոյց կրնայ ըլլալ։—Ուստի կայսերական միւս կուսակալութեանց վայելած հանգստութեան և երջանկութեան Բաղէշի կուսակալութիւնն ալ մասնակից ընելու միջոց ճարեն վաղընդփոյթ որուն գործադրութիւնը և արդի տագնապալի դրութեան բարձումը խոնարհաբար կը խնդրուի։

1323, Յունիս 12

Բաղդատապետ Սղերդի
ԱՊՏ-ԻԼ-ԲԷՋԱԳ

(Սոյն հեռագրերուն պատճէններն Բ. Դրան Ա. Քարտուղարին և ներին գործոց նախարարին եւս ուղղուած են)։

ՍՂԵՐԴ, Սեպտ. 2

Բաղէշու կուսակալութեան մէջ տիրող անիշխանութեան աշխարհաւեր հետևանքները օրըստօրէ սուր հանգամանք կ'առնեն։ Կառավարութիւնը իր անզօրութիւնը խոստովանելով, միջոց մը դադրեցաւ բողոքագիր-աղերսագրեր ընդունելէ։ Ամէն դիմողին „սպասէ քիչ մը“ ըսելով ճամբու կը դնէին։ Վերջ ի վերջոյ ժողովուրդը քիչ մը ահաբեկելու համար՝ „ութ թաղուր զօրք կուգայ երկիրը խաղաղացնելու“ տարաձայնութիւնը մէջտեղ ձգեցին։ Ժողովուրդը թուրք կառա-

վարութեան ու զօրքին ոչնչութեան վրայ հաստատ գաղափար ունենալուն՝ չ'ազդեցաւ ու կառավարութիւնը տարաձայնութիւնը ուժեղցուց ըսելով, „ութ թապուր զօրքին հրամանատարները եւրոպացի են, որոնք պիտի գան, պիտի պատժեն, պիտի կախեն, որովհետև Լահէի ժողովը այսպէս է որոշեր վեց կուսակալութեանց համար“։ Եւրոպացիի, Լահէի ժողովին անուններ լսելնուն 10—15 օր հանդարտեցան, մինչև որ Թահիր փաշան Բաղէշ հասաւ իր պաշտօնին գլուխը անցնելու և ըստ սովորութեան, Մէքթուպճին Սղերդ ղրկեց որուն հետ միւթէսէրիֆին փոխանորդը և քաղաքապետը Պոհթան գացին,—որ ըմբոստութեան ցայտուն ապացոյցը տուած էր—աղաները իրարու հետ, կառավարութեան հետ հաշտեցնելու և զօրքերը հաւաքելու համար։ Մինչ այդ աղաները հաշտութեան կատակերգութիւնը կը կատարէին, անդին ճիզրէի մօտ քիւրդերը կը վառեն քաղդէացւոց երկու եկեղեցի, որոնց բոցերի մէջ 1 քահանայ, 1 կին, 10 այր և մանուկներ մոխիր կը դառնային։

Բէնճինար և Աշիթան աշիրէթներու մէջ երկու երեք օրէ իվեր բուռն ընհարումներ տեղի կ'ունենան. կառավարութիւնը բնաւ չը հետաքրքրուիր, իր գոյութիւնը չի կրնար հաստատել։

Միայն քրիստոնեաներէն տուրք կը հաւաքի, թուրք ժողովուրդը անասելի լուտանքներ ու խայտառակութիւններ կը թափէ հարկահաւաքներու գլխին ըսելով՝ „ամչցէք. ձեր ո՞ր գործին համար տուրք կը պահանջէք, անամօթներ“։ Ասկէց երկու օր առաջ տաճիկ Հաճի մը իր բանտարկած տղուն պատճառով կառավարութեան պաշտօնատունը ներկայանալով կ'ըսէ. „Անաստուածներ, անամօթներ, զրպարտիչներ, հերիք է ձեր ըրածները, եթէ ձեր տան, ձեր ընտանիքին օգտակար անհատներ եղած ըլլայիք, չէիք հաւաքեր դժոխքի, սատանաներու այս բունին մէջ“։

Այսօր Սղերդ նոր միւթէսէրիֆ մը եկաւ, ժողովուրդն ալ նոր պաշտօնէէն բան չի յուսար։ „Բարով չը գար միթէսարիֆը, եթէ լաւ մարդ մը, կուշտ մարդ մը եղած ըլլար, ի՞նչ գործ ունէր հոս“, կը տրամաբանէ ժողովուրդը։

Գիւղերի աշարը ըստ հին դրութեան ծախուեցաւ, թէև նոր դրութեան մը ձայնը ելաւ, բայց առաջիկայ տարուան համար յետաձգուեցաւ կ'ըսուի։

Քիւրդ և տաճիկ ժողովուրդը այս անգամ ալ թափանցելով կուսակալութեան խայտառակութեան՝ որոշած է իր սանձարձակ գործունէութիւնը ծայրագոյն աստիճանի հասցնել։

ՄՈՒՇ, Սեպտ. 3

Տեղիս առաջ. տեղապահ Էլլիտիրէմեան Կորիւն վարդապետ, տարի ու կէս է, պատուհաս եղած էր Տարօնցիներու գլխուն և հակառակ ժողովրդի մշտակի բողոքներուն Օրմանեան այդ վարդապետ օլաճախը ետ չը կանչեց Մուշէն։

Ժողովրդին զզւանքը լեցուած էր արդէն, բայց Էլլիտիրէմեան, շնորհակալութեան և երախտագիտութեան իր գարշելի հեռագրով, որ զարկաւ սուլթանին, պատշաճութեան ամէն սահմանները անցուց, հետևաբար իր շուրջը ալեկոծող ատելութիւնը զգալով մեկնեցաւ Կարին։

Գէորգ Զավուշի և իր ընկերներուն Սուլուխի մէջ կուէն յետոյ, դաշտի 8—10 գիւղեր կողոպտուեցան, և սպաննուեցան անմեղ աշխատաւորներ։ Համիդ այդ դէպքին ազդեցութիւնը կոտրելու և այդ առթիւ հիւպատոսներու տեղեկագիրը ջրելու և խժդժութիւնների վրան նստելու համար, Մուշի միւթէսարրիֆին հրամայեց որ հայոց առաջնորդին ստորագրութիւնով հերքում մը հեռագրի պալատ։ Փաշան իսկոյն այդ մը-քով հեռագիր մը խմբագրելով, կը կանչէ Էլլիտիրէմեան վարդապետը և Ղևոնդ քահանան, որոնց կը կարդայ իր խմբագրած հեռագիրը։ Այդ դաւաճանները լսելով հեռագրի պատճէնը, կը բացագանչեն „չօք ալա, չօք էի տիր, փաշամ“, վարդապետը, նոյնիսկ յափշտակուած, իսկոյն գրպանէն կնիքը հանելով կը կնքէ հեռագիրը և կը յանձնէ փաշային։

Երկու օր յետոյ շշուկ կելլէ որ շնորհակալութեան հեռագիր ղրկուած է պալատ։ Թշուառական կղերականները չեն կրնար ծածուկ պահել իրենց ըրած դաւաճանութիւնը և անպիտան Էլլիտիրէմեանը կեղծ լացով իր կերած ապուրը կը խոստովանի խառն ժողովի ներկայութեան։ Սասնոյ և դաշտի կիներ զինք կանիծեն և վրան կը յարձակին, առաջնորդարանէն կը վռնդեն, դաւաճանը կերթայ քանի մը օր որբանոց կապաստանի, ապա Բաղէշի կուսակալի հովանաւորութեամբ Կարին փոխադրելու հրաման կը տրուի։

Ահա այդ հեռագրին բովանդակութիւնը։ „Քանի-քանի տարիներէ ի վեր կայսերական գաւառներու խաղաղութիւնը վրդովող, հայ երկրագործ ժողովուրդը կեղեքող ու սպաննող, միամիտ ժողովրդին ռուսահպատակութեան հրաւիրող և ստիպող, հայ աղջիկներ առևանգող, ժողովրդեան Ամերիկա գաղթելու միակ պատճառ եղող Գէորգ Զավուշ ըսուած աւազակին ու իր ընկերներու կեանքը ջնջուած ըլլալով, կայսերական գաւառները, սուլթանի խաղաղասէր ու հայրական խնամքին ներքև. սկսան բարւոք կացութեան վերադառնալ։ Վաճառականութիւն և երկրագործութիւն ամէն բան նախանձելի վիճակ մը ունի և հայ ժողովուրդը կաղօթէ յարաժամ օսմ. քաջարի զօրքերուն կեանքին և արևշատութեան, որ շատ իմաստուն և խելացի կերպով, առանց ոևէ մէկու կեանքին, ինչքին ու ստացուածքին վնաս մը հասցնելու, մինակ աւազակներու կեանքը աշխարհին վերցնելու փութացին և այլն և այլն“։

ՆՈՐ ԱՂԷՏՆԵՐ

ԽԱՐԲԵՐԴ, Սեպտ. 20

Ակնի և շրջակայից դրութիւնը սարսափելի է, շունը տէրը չճանչնար, կատարեալ անիշխանութիւն կը տիրէ. զինուորները, մանաւորապէս քիւրդ զինուորները, ամէն օր տասնեակներով կը ձգեն կը փախին, իսկ թիւրք զօրքերը կը հակառակին պատերազմի քալել Տէրսիմի վրայ։ Կը լսուի թէ Զէքի փաշան, Երզնկայէն 6 վաշտ զօրքով, 4 թնդանօթով և 50 բեռ քարիւղով արշաւանք գործածէ Տէրսիմի վրայ։ Առաջին օրւայ կուին

սպանուած են 32 զինուոր և 4 յիսնապետ։ Քրդերը կորսնցուցած են 4 հոգի բայց ամենամեծերէն. Պէքօ աղան սպանուած է։ Այս առթիւ այդ պատերազմին մասնակցող զինուորները ստացած են շքանշաններ. Նէֆէրը տասնապետ, տասնապետը յիսնապետ, չաւուշ եղած են։

Քանի մը օր առաջ Ակնի մօտերը մէկ փոլիս կոմիսէր քէլէկով Եփրատի վրայէն ճամբերդած միջոցին իր ընտանիքով, քիւրդերը կը բռնեն, և կողոպտելէ յետոյ լաւ մը ալ կը ծեծեն և երեսը թքնեն։

Քիւրդերը կը գրաւեն նաև շատ մը ջորիներ, ըսելով,—մեզի այժմ թէ դրամ պէտք է թէ ջորի, մենք պատերազմ ունինք, դրամը վառօդի և ջորիները բեռներու տեղափոխութեան համար։

Ակնայ գաւառի ժողովուրդը անպաշտպան վիճակի մէջ է։ Թիւրք ամբոխը, յուսահատած իր կառավարութենէն, կսպառնայ եւրոպական հսկողութիւն պահանջել։

*

Ակնի հրդեհի մասին հետևեալը կը հաղորդեն.

Օգոստոս 30-ի գիշերը, Թրքական ժամը 4-ին, մէկ թիւրքի, Միւտրիս էֆէնդիի տունէն հրդեհ ծագելով կայրին 28 թիւրքի և 3 հայու տներ, 216 խանութ և կառավարական բոլոր շէնքերը.—խօնախը, դատարանը, ոստիկանատունը, փոստ-հեռագրատունը, թաղապետանոցը, երկրագործական պանքան, զինուորական դեղարանը, բանտը, բացի մէկ փոքրիկ զօրանոցէ։ Զորս ժամուայ մէջ բոլորն ալ հրոյ ճարակ եղած են. վնասը կը հաշուեն մէկ միլիոն երկու հազար ֆրանք։ Հայերուն վնասը 10% է, յոյներինը 5%, մնացածը թիւրքերուն է։ Խանութների ապրանքները կարելի կըլլայ ազատել բացի մէկ քանիէն։

Հայերը նախապէս կարծեցին թէ 96-ի դէպքին կրկնումը է, ինչպէս նաև թիւրքերէն շատերը, որովհետև նոյնպէս գոռում գոչումներով և հրացանաձգութիւններով կը թնդար քաղաքը։

Հրդեհի միջոցին Ակն գտնուող 80-ի չափ տէրսիմցի քրդեր, մասնաւորապէս թիւրքերու խանութները կոտրտելով թալանի ուած են, որով թիւրքերու և քիւրդերու յարաբերութիւնները լաւած են. իսկ հայերու սահմանը անփոխն մնաց՝ որովհետև հայերը մինչև վերջ հսկեցին իրենց խանութները և երբ կրակը հայերու շուկան անցաւ, արդէն ասոնք իրենց ապրանքները ապահով տեղեր պարպած էին։

Այրած շէնքերուն մեծ մասը գրեթէ թիւրքերուն են, մօտ 80 խանութ Վագրֆին կը պատկանէր, 45 խանութ և 4 տուն Խաղնատար օղլի Մուստաֆային։

Հրդեհի գործին մէջ մասնաւոր կանխամտածութիւն մը տեսնել ուզեցին, և նոյնիսկ կասկածով ձերբակալած են կարգ մը հայեր, բայց այժմ ազատ ձգուած են։ Շատ թիւրքեր ալ Ալլահի պատիժը կը համարին։

Տէրսիմի քիւրդերը Ակնի գաւառին մէջ ալան թալան կընեն։ Մինչև օրս 32 թիւրք գիւղեր թալանած և անասունները տարած են։ Տարած են նաև երկու հայ գիւղերու անասունները, մէկուինը ետ առնուած է 90 ոսկի փրկանք տալով, իսկ միւսէն՝ մէկ մասը միայն առնուած է։ Քիւրդերը ցարդ տարած են 175 ձի և ջորի և սպաննած են 6 թիւրք իսկ 11 զինուոր ինկած են կռիւի մէջ։ Քիւրդերը գրաւած են զինուորներու մաւզէր հրացանները և փամփուշտները։ Փամփուշտներուն մանաւանդ խիստ կարեւորութիւն կուտան, ուր գտնեն կը յափշտակեն։

Օգոստոս 12-ին Ակնէն 4 ժամ հեռու Բազար թաշի ճամբուն վրայ Տէմիր Մաղարայի առջև, քրդերը կարաւան մը զարնեն և կը գրաւեն 42 ջորի և 2000 ոսկիի ապրանք, գնդակահար կսպաննեն Իպրահիմ և Ահմէդ ֆէյզի անունով ջորեպանները։ Թիւրքերուն մէջ առհասարակ կարծիք կայ թէ քրդերուն հետ ֆէդայիներ կան. քիւրդը մարդ չսպաններ, կըսեն, ֆէդային է որ կը զարնէ, և ատոր համար սոսկում մը ունին։ —Գողցուած ջորիներու տէրերը 250 ոսկի տարած են ջորիները ետ բերելու համար, քիւրդերը թէ ոսկիները կառնեն և թէ ջորիներն ալ չեն տար։ Թիւրքերը լալով կարին հիւպատոսներուն կը դիմեն։

Նոյն դրութիւնը կը տիրէ նաև Զմշկածակի մէջ ուր ժողովուրդը, հայ և թիւրք միասին, կոխելով խօնախը դուրս կընեն գայմագամը և մալ միւտիրին և կառավարչատան դռները կղպելով բանալիները կը պահեն։ Շուկային մէջ ժողովուրդը գրգռուած կը պօռար, „երբ դուք մեզ պաշտպանելու ու կառավարելու կարող չէք, մենք ալ ձեզ չենք ճանչնար, դուրս կորսուեցէք“։

ԲՈՆԱՒՈՐ ՊԱՇՏՕՆԵԱՆ

ՎԱՆ, Սեպտ. 17

Ալի բէկը հեռացաւ տնտեսապէս արիւնաքամ ընելէ յետոյ ամբողջ ազգաբնակութիւնը, մասնաւորապէս հայերը, որոնք պարտք-սալաֆի տակ քանդուեցան։ Քաղաքացին ալ գիւղացին ճակատագրին ինկաւ։ Հարկահաւաքութեան դժոխային սիստէմէն, հալածանքէն ու ճնշումներէն զերծ չը մնացին նաև թիւրքերը, որոնց մէջ հետզհետէ կը շեշտի սպառնացող զայրոյթը, անոնք ալ սկսած են գաղտնի յեղափոխական ժողովներ ընել։

Եռանդեռանդ դուրս եկող հայերէն և թուրքերէն յեղափոխական թռուցիկներու վրայ, կառավարութիւնը խստացաւ, միւս կողմէ ճնշումները աւելի կը մտրակեն յեղափոխական ոգին թիւրքերուն մէջ, որոնք հաշտ և սերտ յարաբերութիւն կը պահեն հայերուն հետ։

Գիտակից թիւրքերուն մէջ սկսած է յեղափոխական հոսանք, բաւական թիւրքեր ձերբակալուած են իբր յեղափոխականներ։ Աղթամարի և Վարագի կռիւներ, Այգեստանի թաղերու հատուկտոր ընդհարումներ, փոլիս Սահակի, Արմենակի, Շապաքի և այլ տեսարաններ, պաշտօնեաներուն զգացնել տուին իրենց կեանքի արժէքը,

Այս և ուրիշ կարգ մը երևոյթներ բոլորովին վարկաբերկ ըրին Ալի բէկը, որ հակառակ իր և իր սիրելիներու և պնակալէզներու գերագոյն ջանքերուն, պաշտօնական եղաւ ժողովրդի և զինուորներու նախաձեռնութեամբ եղած բողոք—ցոյցին։ Այգեստանի և Քաղաքամիջի ամբողջ խանութները երեք օր փակ մնացին։ Ժողովրդի այդ խաղաղ ցոյցին չը մասնակցող խանութներն ալ զօրքերու կողմէ կը փակուէին։ Վերջապէս ժո-

ղովուրդը յաղթանակեց։ Ժողովրդական այդ ապառնացող ալիքներուն առջև Պոլսէն հեռագիր եկաւ, „Ալի բէկ շուտով ճամբայ թող ելնէ, իսկ անոր տեղ պիտի պաշտօնավարէ Պաշգալէի միւթէսարրիֆը, մինչև նոր կուսակալի հասնիլը“։

Սեպտ. 15-ին շաբաթ, Վանէն մեկնեցաւ հրէշ կուսակալը սուլթանիզմի մարմնացումը, հետը տանելով ամբողջ Վասպուրականի ժողովրդին պժգանքն ու անէծքը։

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Հոկտեմբեր 3

Անցեալ ձմեռ, գարնան մօտերը, Զէյթունի զօրանոցին մէջ վարակիչ հիւանդութիւն մը առաջ եկաւ. զինուորներէն օրական 5 և յետոյ 10—15 հոգի կը մեռնէին, այնպէս որ գայմանգամը և բարձր զինուորականութիւնը գլուխնին կորսնցուցած ահ ու դողի մէջ ինկած էին։ քննութիւն կատարելու և հիւանդութեան առաջքը առնելու համար հրաւիրուեցան բժիշկներ, մինչև իսկ Պոլսէն մասնաւոր բժիշկներ եկան գործը քննելու համար։ Բոլոր բժիշկները միաբերան կը հաստատէին թէ զինուորներու խմած ջուրը թունաւորուած էր։ Նախապէս Զէյթունի հայերու վրայ ձգեցին իբրև մասնաւոր նպատակով մը կատարուած գործ։ Այս վախի ու սարսափին տակ՝ զէյթունցիներու կողմէ զօրանոցին վրայ յարձակումի մը երկիւղ կրելով, գօմանտանը հեռագրով կը պահանջէր անյապաղ նոր զօրքեր ճամբայ հանել Մարաշէն, Ալպիստանէն և Այնթապէն, իսկ մինչև նոր զօրքերու առաքումը ամբողջ զինուորական հրամանատարութիւնը գիշեր ցերեկ քուն ու հանգստութիւն չունէր։ Բժիշկները վերջապէս, հայերու վրայ ձգուած մեղադրանքի կասկածը փարատեցին, և հաստատեցին որ զօրանոցի մէջ բացուած ջրհորին մէջ գոյութիւն ունեցող տեսակ մը հանքային բաղադրութենէն առաջ եկած էր այդ մահաբեր հիւանդութիւնը։

Այժմ ամէն բան վերջացած է, մեռածները ազատեցան, իսկ հիւանդները փոխադրուեցան հոս հոն և անոնց տեղ հաստատուեցան նոր զօրքեր։ Առաջ որ 1000 զինուոր կար, այժմ 1400-ի բարձրացաւ։ Ասոնց արգիլուած է հորերի ջուրը գործածել, մինչև որ պէտք եղած մաքրագործումը կատարուի կամ զօրանոցի մէջ դրսէն ջուր առնուի։ Գօմանդանը և իր պաշտօնակիցները ատկէ իվեր հանգիստ ու անվախ կը քնեն։

Մարտի սկիզբները սկսաւ նոր զինուորներու գուրբան (քուէ) քաշուիլ։ Մարաշի թուրքերը՝ իրենց հետ միացած ուրիշներ որպէսզի գուրբանները քաշուած նոր զինուորներ չը հաւաքուին և չը կանչուին, հետևեալ նենգամտութիւնը կը մտածեն։ Կորոշեն տեղին կեդրոնական մեծ մզկիթին մէջ հրդեհ ձգելու փորձ մը ընել և հայերուն վերագրել, և այդ բանը պատրուակ բռնելով զինուորութեան չը գնալ. կորոշեն ու կընեն։ Նախապէս գիւրավառ և շուտ մարող նիւթեր բռնկցնելով քանի մը տեղերէ կը ձգեն մզկիթին մէջ և իսկոյն աղաղակ կը փրցնեն թէ հայերը մզկիթը կը վառեն։ Այլն։ Ասոր վրայ, գիշերով, ամէն մարդ, ինչպէս նաև զինուորները դուրս կը թռին հրդեհին վայրը և կը մարեն։

Ոստիկանութիւնը քիչ յետոյ հրդեհին հեղինակները գտնելու համար կսկսի հայերը ձերբակալել և բանտերը լեցնել, իսկ թուրք խուժանը գրգռուած կըսպառնար հայերը կոտորել և թալանել։ Հայերը անմեղ և անտեղեակ, սարսափահար տուներնին փակուած գամուեր էին, չը գիտէին ինչ ընել։ Միւթէսարրիֆը իր մօտ կանչելով հայ երևելիներէն Խրլաղեան և ուրիշներ խստիւ կը պահանջէ որ հրդեհին հեղինակ հայերը գտնեն և իրեն յանձնեն, հակառակ պարագային ինքզինք անկարող կը յայտարարէ թիւրքերու գրգռման առաջքը առնել։ Հայերը գլխիկոր ետ կը դառնան, առանց ճար մը գտնելու։ Վերջապէս քանի մը օր յետոյ խնդրին գիտակից բարեսիրտ թիւրք մը, հայերը այս տագնապէն փրկելու համար, գիշերով Խրլաղեանին մօտ կերթայ և խնդրին բուն էութիւնը կը յայտնէ։ Յաջորդ առաւօտ հայ աղաները փաշայի մօտ գնալով, ուր կը գտնուէր նաև յիշեալ թիւրքը, կը յայտնեն գործին եղելութիւնը և պարագլուխներուն անունները։ Շարագործները կը ձերբակալուին և իսկութիւնը կը հեռագրուի Պոլիս, ուրկէ հրաման կուգայ որ խնդիրը խաղաղութեան մէջ պահեն և գուրբա քաշուած զինուորներն ալ ազատ ձգուին։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՕՑԻԱԼԻՍՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Երրորդ Նամակ

Շարունակենք մեր զրոյցը այն մասին, թէ ինչպէս պաշտպանել գործարանական աշխատանքի ներկայացուցիչներին։

Օր չի անցնում, որ այս կամ այն գործարանում չառաջանայ մի „դժբախտ պատահար“. մէկի ձեռքն է պոկուում, միւսի ոտն է ջարդուում, երրորդի ամբողջ մարմինն է տրորուում, չորրորդը իսպառ անդամալոյծ է դառնում ու մեռնում։ Եւ այդ բոլոր „դժբախտ պատահարները“ կատարուում են սովորաբար գործարանատէրերի անփութութեան շնորհիւ։

Գործարանատէրը մէկ հիմնական հոգս միայն ունի,— քիչ ծախսել և շատ վաստակել։ Նրա սիրտը ամբողջապէս գնացել է իր քսակը։ Որքան քսակը աւելի է լցուած, այնքան սիրտը ուրախ է զարկում։ Ուստի առնուազը միամտութիւն է կարծել, թէ գործարանատէրերը իրենք ինքնաբերաբար կը հոգան բանուորների մասին, մարդասիրական զգացմունքից։ Այն ժամանակ միայն կարելի է ստիպել այդ ոսկով լի սրտերը արձագանք տալ բանուորների պահանջներին, երբ ցաւագին հարուածներ կը տաք գործարանատիրոջ քսակին։ Դրանից և պէտք է օգտուել։

Երբ գործարանատէրը կիմանայ, որ բանուորների հետ պատահած ամեն մի դժբախտութեան դէպքում նա պէտք է զոհաբերի իր գրպանից, երբ օրէնքը կը պարտաւորեցնէ նրան վարձատրել այն բանուորներին, որոնք

վնասել են նրա գործարանում, երբ նոյն օրէնքը կը ստիպէ նրան ապահովել որբացած ընտանիքները այն բանուորների, որոնք սպանել են կամ թէ կորցրել աշխատելու ընդունակութիւնը նրա արհեստանոցում,—այն ժամանակ պ.պ. գործարանատէրերը, հանքատէրերը և ուրիշ տեսակ կապիտալիստները ամեն ջանք ի գործ կը դնեն, որպէսզի իրենց մօտ որքան կարելի է քիչ լինեն „դժբախտ պատահարներ“։ Այն ժամանակ և՛ նրանց մեքենաները կը սկսեն լաւ աշխատել, և՛ աշխատաւորներ կը տրւեն նրանց մօտ այնքան, որքան հարկաւոր է, և՛ սանդուխները այլևս այնպէս յաճախ չեն խորտակւիլ և թոկերը ամուր կը լինեն, յաճախ չեն կտրւիր

Այդ բոլորը ի նկատի ունենալով, մեր ծրագիրը պահանջում է, որ բանուորները ապահովագրւին դժբախտ պատահարներից՝ կապիտալիստների հաշւով։ Դա կարելի է իրագործել զանազան ձևով։ Օրինակ այսպէս. թող օրէնքը պարտաւորեցնի գործարանատէրերին՝ մտցնել մի յայտնի գրաւական իւրաքանչիւր բանուորի համար, որ մտնում է նրա մօտ ծառայութեան։ Այդ բոլոր մտցրւած գումարները կ'երթան բանուորական դրամարկղը։ Այդ վերջինը կը գտնւի որոշ մարմնի տնօրինութեան տակ, մի մարմնի՝ որ կազմւած կը լինի ընտրւած անձերից։ Եւ ահա ամեն մի դժբախտ պատահարի դէպքում այդ մարմինը կ'որոշէ, տա՞լ արդեօք վնասւած բանուորին վարձատրութիւն, թէ ոչ, և եթէ տալ, որքա՞ն։

Ով որ ապրում է բացառապէս իր ձեռքի աշխատանքով, ով որ միայն այն ժամանակ է կուշտ ուտում, երբ շղթայւած է աշխատանքի վրայ,—նրա համար չը կայ աւելի ծանր բան, քան հիւանդութիւնը և անաշխատութիւնը։

„Հիւանդութի՛ւն“, „անաշխատութի՛ւն“—որքան դառն ստածմունքներ և վիրաւորական զգացումներ են ծնում նրանք աշխատաւոր մարդու հոգում... Այդ կարող է ըմբռնել և ամբողջ սրտով զգալ միայն նա, ով որ իր սեփական անձի վրայ է փորձել, թէ ինչ ասել է զրկւիլ աշխատանքից այն ժամանակ, երբ նրա մէջ է իր բոլոր յոյսը և փրկութիւնը, և թէ ինչ ասել է հիւանդանալ այն ժամանակ, երբ պէտք է աշխատել, որպէսզի չը մեռնել քաղցից և չը դիմել մուրացկանութեան...

Ապա կայ և ծերութիւնը, բոլոր „հիւանդութիւններից“ ու „անաշխատութիւններից“ ամենազարհուրելին, որ անողորմ ճակատագրի պէս հետամուտ է լինում աշխատանքի միլիոնաւոր բանակի ներկայացուցիչներին։ Իրենց ամբողջ դարը նրանք աշխատում են հասարակութեան օգտին, իրենց ամբողջ դարը նրանք արտադրում են շատ աւելի քան թէ ստանում են իրենց աշխատանքի համար. իրենց ամբողջ կեանքի ընթացքում նրանք նպաստում են գործարանատէրերի հարստանալուն։ Բայց ահա գալիս է ծերութիւնը—և նրանց քշում են փողոց՝ „ապրեցէք, ինչպէս կուզէք“։ Ահա թէ որտեղ է թաքնւած ժամանակակից հասարակական կարգերի „արդարութիւնը“։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իշխանութիւնը—նոր, ընտրովի իշխանութեան մասին է խօսքս և ոչ հնի—պէտք է առնէ իր հովանաւորութեան տակ և ապահովէ թէ հիւանդների ու աշխատազուրկների և թէ ծերացած աշխատաւորների գոյութիւնը։ Այդտեղից է առաջանում մեր ծրագրի մի ուրիշ պահանջը—ապահովագրել աշխատաւորներին պետութեան հաշւով՝ հիւանդութիւնից, անաշխատութիւնից և ծերութիւնից։

Բայց ո՞րտեղից վերցնել այդ բոլորի համար փող, կը հարցնէք դուք։ Որտեղից վերցնե՞լ. անշուշտ նախ հէնց գործարանատէրերից, որոնք ապրում են ու հարստանում բանուորների աշխատանքով։ Իւրաքանչիւր գործարանատէր, համեմատ իր ձեռնարկի ծաւալին և իր ունեցած բանուորների թւին, պարտաւոր է մտցնել պետական գանձարանի մէջ որոշ տարեկան տուրք։ Այդպիսի տուրքից գոյանում է յատուկ դրամագլուխ, որից պէտք է յատկացնեն վարձատրութիւններ՝ հիւանդ ու աշխատազուրկ բանուորներին։

Հիւանդներին ու աշխատազուրկներին ապահովելու միջոցները կը մտնեն գանձարան ոչ միայն գործարանատէրերից, այլ առհասարակ բոլոր նրանցից, որոնք պատկանում են հասարակութեան ունևոր դասակարգերին։ Այդ վերջինների ամբողջ բարեկեցութիւնը հիմնւած է բանուորների աշխատանքի վրայ։ Դա չի կարելի մոռանալ, իսկ ով որ կը մոռանայ՝ օրէնքը պարտաւոր է յիշեցնել նրան գործով և ոչ խօսքով։ Հարկ չը կայ ասելու, որ հիւանդների ու աշխատազուրկների համար մտցրւած տուրքը հէնց ինքը գործով յիշեցնել է նշանակում այն անհատների համար, որոնք չափազանց վատ են յիշում։

Նոյնը ծերացած աշխատաւորների համար։ „Նոր իշխանութիւնը“ չի թողնի նրանց առանց գոյութեան միջոցների, այլ կը տայ նրանց կամ նրանց որբ ընտանիքներին ամսական թոշակ, որովհետև իւրաքանչիւրը այդ թշւառ աշխատաւորներից գուցէ աւելի մեծ օգուտ է բերել իր հայրենիքին, քան մի 10 գեներալ մէկ տեղ առած, որոնք այսօր վայելում են „հին իշխանութեան“ առատաձեռնութիւնը, և պաշտօնաթող եղած ժամանակ ոչ միայն ունին ինչ որ հարկաւոր է, այլ նոյնիսկ օգտւում են որոշ կոմֆորտից։ Հէնց միայն այն հանգամանքը, որ ամեն մի ծեր աշխատաւոր իր ամբողջ կեանքն անց է կացրել ազնիւ աշխատանքի մէջ՝ իրաւունք է տալիս նրան հասարակութեան խոր յարգանքը վայելելու։ Նոր օրէնքի կամքով, կապիտալիստների քսակը պէտք է, վերջապէս, բացւի յօգուտ նրանց, որոնք իրենց կոշտացած ձեռքերի աշխատանքով լցրել են այդ քսակը...

*

„Գիտութիւնը ոյժ է“։ Դա, իհարկէ, ճշմարտութիւն է։ Գիտութիւնը տալիս է ոյժ և որովհետև նա ոյժ է տալիս, գիտունները և հզօրները վաղուց ի վեր ձգտել են իրենց ձեռքում պահել գիտութիւնը և միւս կողմից ձգտել են հեռացնել անգէտին ու անուժին—այսինքն ժողովրդական մասսաներին—այդ գիտութիւնից։ Այդպէս է եղել բոլոր ժամանակներում. այդպէս է և ներկայումս։ Այդ իրողութիւնը գտնւում է հէնց տիրապետութեան հիմքում։ Ով որ իշխում, տիրապետում է, նա ուզում է ամրացնել իրեն և տկարացնել հպատակին, ճնշւածին։ Իսկ ով ձգտում է ընդհանուր կրթութեան, լուսաւորութեան՝ նա պէտք է կռիւ մղէ ամեն տեսակ տիրապետութեան դէմ... Ազատութեան միջոցով դէպի լուսաւորութի՛ւն։ Ազատ պետութեան մէջ միայն ժողովուրդը կարող է լոյս, կրթութիւն ստանալ։

Միայն այն ժամանակ, երբ այդ ժողովուրդը կը նուաճէ քաղաքական իշխանութիւն, նրա համար կը բացուին գիտութեան դռները։ Առանց ժողովրդի իշխանութեան չը կայ նրա համար լուսաւորութիւն։ „Գիտութիւնը ոյժ է, ոյժը—գիտութիւն“։

Այդպէս էր յայտարարում Գերմանիայի բանուորական կուսակցութեան պարագլուխներից մէկը, նշանաւոր Լիբկնեխտ։ Այդ տողերի մէջ իւրաքանչիւր խօսք ճշմարտութիւն է։ Մի՞թէ ճշմարիտ չէ, որ աշխատաւոր ընդհանրութիւնը այն ժամանակ միայն լիօրէն կ'օգտուի գիտութիւնից, երբ նա ամբողջ ոյժը իր կողմը կունենայ, երբ այսօրուան կապիտալիստական պետութիւնը կը փոխարինուի ազատ աշխատանքի պետութեամբ։ Բայց մենք ասել ենք արդէն և նորից ընդգծում ենք, որ դէպի ապագայ աշխատաւոր, սոցիալիստական պետութիւնը տանող ճանապարհի վրայ մեզ անհրաժեշտ է մտցնել կեանքում մի շարք խոշոր բարենորոգումներ, կամ ուրիշ խօսքով, անհրաժեշտ է իրագործել նուազագոյն ծրագիրը։ Այդ բարենորոգումները պէտք է վերաբերուին և ժողովրդական լուսաւորութեան Այդտեղ առաջին կէտն է ընդհանուր ու ձրի կրթութեան հարցը, որ նոյնպէս մեր նուազագոյն ծրագրի պահանջներից մինն է։

Նոր օրէնքը՝ ընդհանուր գրագիտութեան մասին՝ հնարաւորութիւն կը տայ աշխատաւորների զաւակներին մնալ դպրոցում օրինակ 8 տարեկանից մինչև 16 տարեկան։ Այդտեղ կրթուած ուսուցիչների ղեկավարութեամբ նրանք կը ծանօթանան զանազան գիտութիւնների ընդհանուր հիմունքների հետ։ Նրանց հետաքրքրութիւնը գէթ մասամբ գոհացում կրստանայ և բանականութիւնը՝ առողջ սնունդ։ Երեխաները ձեռք կը բերեն ճիշտ հասկացողութիւններ բնութեան մասին, այլևայլ երկիրների պատմութեան ու ժողովուրդների կենցաղի մասին։ Բացի դրանից նրանք կիւրացնեն և այնպիսի գիտելիքներ, որոնք կ'օգնեն նրանց և իրենց ապագայ աշխատանքի մէջ։ Մի խօսքով, նրանք կեանք կը մտնեն արդէն ոչ իբրև անճար տգէտներ, ինչպէս մտել են մեծ մասամբ նրանց հայրերը, և որ առանձնապէս կարևոր է, նրանց գլուխը այլևս լցուած չի լինի ամեն տեսակ յիմարութիւններով, որոնք այնպէս հեշտութեամբ իւրացնում են մութ ու անհաւատ մարդկանց շրջանում ապրած երեխաները։

Ինչ վերաբերում է տարիքաւոր աշխատաւորներին, նրանք նոյնիսկ ութժամեայ աշխատանքի միջոցին՝ միմիայն երեկոները պիտի ունենան ժամանակ մտաւոր պարապմունքների համար։ Ուստի նրանց համար պէտք կը լինի հիմնել յատուկ իրիկուան կուրսեր, կամ բանուորական համալսարաններ։ Այդտեղ, անկասկած, աշխատաւորները կը համախմբուին, որպէս գիտութեան իսկական տաճարի մէջ, որ կարող է յագեցնել նրանց ուսման ծարաւը։ Այդտեղ ուսումը կը լինի ձրի և, հասկանալի է, ոչ մի ճնշում չի կարող լինել պարապմունքների ընտրութեան մէջ։

Սակայն միմիայն բանուորական համալսարաններով բաւականանալ չի կարելի։ Ճիշտ է, ուսուցչի կամ պրոֆէսորի կենդանի խօսքը կարող է շատ բան տալ սովորողներին։ Որպէսզի նրանք կարողանան լրացնել իրենց գիտելիքները, որպէսզի ծանօթանան այն բոլորի հետ, որ կատարուում է և կատարել է այս աշխարհում, հարկաւոր են գրքեր, հարկաւոր են լրագիրներ ու հանդէսներ։ Այդ բոլորը ձեռք բերել սեփական հաշուով առհասարակ դժուար է, իսկ աշխատաւոր մարդու համար բոլորովին անհնարին է։ Աշխատաւորների այդ օրինաւոր կարիքը ևս գոհացնելու համար, հարկաւոր կը լինի հիմնել գործարաններում ընթերցարաններ ու գրադարաններ։

Սրանք բոլորը այնքան հասկանալի բաներ են, որ թւում է թէ խօսել իսկ չ'արժէ։ Եւ այնուամենայնիւ հարկաւոր է լինում խօսել, որովհետև ամեն մի անսովոր նորմուծութիւն կարող է տարօրինակ թւալ։ „Տեսնում է՞ք, ի՞նչեր են հնարում, մինչև իսկ գրքեր, լրագիրներ հանդէսներ բանուորների համար, գուցէ և օտար լեզուներո՞վ“... Այս տեսակ ցինիկ հեգնական բացականչութիւններ յաճախ կը լսէք։ Ժամանակակից կեանքի տէրերը տարօրինակ են գտնում բոլոր վերոյիշեալ պահանջները։ Եւ զարմանալի չէ։ Չէ՞ որ հարցը չի վերաբերում իրենց, տէրերի ցանկութիւններին ու քմահաճոյքներին, այլ ինչ որ „ամբոխի“, ինչ որ „անվարտիկների“ առողջ ու նորմալ պահանջներին,—մի „ամբոխի“, որ, ո՞վ զարմանք, յաւակնում է իւրացնել „մեծերի“, „աղաների“ սովորութիւնները... Ահա այդ է օտարոտի թւում նրանց։ Զարմանալի չէ—կրկնում ենք։ Նրանց, ժամանակակից դրութեան այդ տէրերին, անհասկանալի է նոյնիսկ այնպիսի մի տարրական պահանջ, ինչպէս, օրինակ, 8 ժամեայ աշխատանքի օրը։ Բայց հօ չի կարելի հրաժարուել մարդկային օրինաւոր իրաւունքներից նրա համար միայն, որ կապիտալիստները անընդունակ են հասկանալ նրանց։ Ոչ, բաւակա՞ն արդէն թագաւորեցին նրանք իրենց դարում, ժամանակ է, որ աշխատաւորը ևս զգայ ինքն իրենն, որպէս մարդ...

*

Վաղուց արդէն ասուած է, որ մէկ ծիծեռնակը գարուն չի բերի, և մէկ հոգին կուռող չէ ռազմի դաշտում։ Նա մենակ անճար է և դատապարտուած է կորչելու... Աշխատաւորը մեն-մենակ անզօր է իր „աղայի“ դիմաց։ Աշխատաւորը, որ գործում է իր միջոցներով և իր սեփական բիսկով, որքան էլ հպարտ կանգնի պայքարի մէջ, վերջ ի վերջոյ, միևնոյն է, պիտի զիջէ իր գործարանատէրին, եթէ ընկերները չ'օգնեն նրան։ Ամեն անգամ, երբ աշխատաւորը պահանջում է աւելացնել օրավարձը կամ կրճատել աշխատանքի օրը, երբ նա պահանջում է վարուել իր հետ քաղաքավարութեամբ, երբ նա բողոքում է գործարանական նեղիչ կարգերի դէմ—այդ բոլոր դէպքերում նա անհրաժեշտաբար պարտութիւն կը կրէ, եթէ նրա ընկերակիցները չը յայտարարեն աղային նոյն պահանջները։ Աղան կարող է ուզած վայրկեանին դռները ցոյց տալ „ըմբոստին“ և կ'ասէ նրան. „Դուր չի գալիս, փնտրիր աւելի լաւ աղա. քեզպէսները հարկաւոր չեն ինձ. գործը կ'երթայ և առանց քեզ. միանգամ միայն ձայն կը տամ—և ինձ մօտ կը վազեն աշխատանքից զուրկ հարիւրաւոր անվարտիկներ. ո՞դ ըլէք, բարի ճանապա՞րհ“։

Բոլորովին այլ խօսակցութիւն կունենար աղան, եթէ նա գործ ունենար ոչ թէ մեկուսացած աշխատաւորների, այլ նրանց կազմակերպուած, ամուրդաշնակցած իմբերի հետ։ Այդտեղ նա իսկոյն կը զգար, որ իր առջև կանգնած է մի ոյժ, որ պէտք է

հաշի առնել և որի հետ աւելի քաղաքավարի զրոյց պէտք է ունենալ, ապա թէ ոչ կարող է յանկարծ մնալ առանց աշխատաւոր ձեռքերի և գործը կը տուժէ...

Ուրիշ, քաղաքակիրթ երկրների բանւորները վաղուց մբռնել են այդ միահամուռ ընկերակցական կռւի օգուտը, ուստի և ամեն տեղ ձգտում են կազմակերպւել մեծ միութիւնների, դաշնակցութիւնների մէջ։ Մի քանի թւեր բերենք՝ այդ ցոյց տալու համար։

1904 թւին Անգլիայում զանազան միութիւնների մէջ կազմակերպւած բանւորների թիւն էր 1,867,000։ Նոյն 1904-ին այդպիսի դաշնակից բանւորներ Գերմանիայում հաշւում էին 1,600,000. Ֆրանսիայում 1902-ին նրանց թիւը հասնում էր՝ 720,000-ի, Իտալիայում—480,000-ի, Դանիայում—համարեա 87,000-ի։ Այդ փոքրիկ երկրում, ուր ազգաբնակութիւնը ընդամենը երկու ու կէս միլիոն է, վարձու աշխատաւորների երեք քառորդը մտնում է զանազան միութիւնների մէջ։

Վերը յիշած երկրներում աշխատաւորները կազմում են ընկերութիւններ իրենց արհեստի կամ պրոֆէսսիայի տեսակի համեմատ, այսինքն ջուլհակները միանում են ջուլհակների հետ, քարտաշները քարտաշների հետ, հիւսները հիւսների և այլն։ Ահա թէ ինչու այդ միութիւնները կոչւում են պրոֆէսիոնալ (արհեստակցական)։

Պրոֆէսիոնալ միութեան իւրաքանչիւր անդամ պարտաւորւում է շաբաթական կամ ամսական մի որոշ, փոքրիկ գումար մտցնել ընդհանուր դրամարկղը։ Ապա—որ աւելի կարևոր է—իւրաքանչիւրը, որ մտնում է միութեան մէջ, պարտաւորւում է իր պատուոյ խօսքով կատարել միութեան բոլոր որոշումները, կարգադրութիւնները։ Եթէ չը պէտք է գործես ընկերների համաձայնութեամբ, նրանց հետ ներդաշնակ՝ միտք էլ չունի մտնել նրանց միութեան մէջ։ Ինչո՞վ են զբաղւում այդ միութիւնները։

Բազմաթիւ են նրանց պարապմունքները։ Պէտք է, օրինակ, աշխատանք փնտրել մի անգործ մնացած ընկերոջ համար, կամ ժամանակաւոր նպաստ տալ նրան անաշխատութեան միջոցին, կամ պէտք է գտնել առժամանակեայ բնակարան միութեան որևէ անդամի համար, կամ հոգալ մէկի որբացած ընտանիքի մասին, կամ թէ հարկաւորւէ ձեռնհաս խորհուրդներ տալ մի ուրիշ անդամի (իրաւաբանական օգնութիւն) այն դէպքում, երբ վերջինը որևէ դատ է ունենում իր գործատիրոջ հետ. հարկաւոր է, վերջապէս, հիմնել գրադարան, ընթերցարան, ձրի կուրսեր,—այդ բոլորը օգտաւէտ ձևով կարող է անել աշխատաւորների համար՝ պրոֆէսիոնալ միութիւնը, այն միջոցներով, որ նա ունի իր հաւաքական դրամարկղի մէջ։

Սակայն, այդ չէ պրոֆէսիոնալ միութիւնների կարևորագոյն գործը։ Նրանց գլխաւոր նպատակն է՝ կռիւ, մասսային նպատակաւոր ու սիստեմատիկ կռիւ գործատէրերի դէմ։ Եւ այդ կռւի վրայ է, որ ամենից առաջ և ամենից աւելի՝ պէտք է գործադրւին միութիւնների նիւթական միջոցները։

„Պրոֆէսիոնալ (արհեստակցական) միութիւնը—ասում է Գերմանիայի բանւոր կուսակցութեան նշանաւոր առաջնորդ, Աւգուստ Բէբէլ—ձգտում է աւելացնել օրավարձը, կրճատել աշխատանքի ժամանակամիջոցը, ոչնչացնել պայմանից դուրս կատարւող աշխատանքները. նա աշխատում է մտցնել արդիւնաբերական հիմնարկութիւնների մէջ մարդկային արժանապատւութեանը վայել պայմաններ, նա պահպանում, հովանաւորում է իր աշխատաղուրկ անդամներին, ապա նա կռւում է որպէսզի թոյլ չը տայ իջեցնել վարձագինը և երկարացնել աշխատանքի օրը. նա կռւում է, մի խօսքով այն բոլոր չարիքների դէմ, որոնք վատթարացնում են աշխատանքը։ Նա, վերջապէս, ամրացնում է աշխատաւորների մէջ համերաշխութեան գաղափարը, առանց որի չի կարող իրականանալ ոչ մի մեծ նպատակ“։

Հարց. ի՞նչ միջոցներ են ի գործ դնում միութիւնները իրենց այդ մեծ պայքարի մէջ։ Ի հարկէ, նախ և առաջ նրանք բանակցութիւններ են սարքում մի կողմից կապիտալի ներկայացուցիչների, միւս կողմից միութեան ընտրեալների միջև։ Իսկ երբ բանակցութիւնները ոչ մի արդիւնք չեն տալիս, նրանք դիմում են այնպիսի խոշոր միջոցների, որպիսիք են գործադուլները։ Այդտեղ է, որ պրոֆէսիոնալ միութիւններին հարկաւոր է լինում ծաւալել իրենց բովանդակ ոյժն ու գործունէութիւնը։ „Արհեստակցական միութիւնների նպատակները—ասում է Բէբէլը—այնքան աւելի դիւրութեամբ են իրագործւում, որքան ուժեղ են լինում իրենք միութիւնները, այսինքն՝ որքան աւելի մեծ թւով անդամներ ունին նրանք, որքան աւելի կարող ու ձեռնհաս են նրանց ղեկավարները և որքան աւելի հարուստ են նրանց դրամարկղները“։ Այդ մէկը երբէք չը պիտի մոռանալ։ Ուստի անհրաժեշտ է ամեն ճիգ ի գործ դնել՝ որպէսզի այս կամ այն պրոֆէսիոնալ ընկերութիւնը տարածէ իր ճիւղաւորութիւնները ամբողջ երկրի, դիցուք, ամբողջ Կովկասի վրայ, որպէսզի միևնոյն պրոֆէսսիայի, արհեստի աշխատաւորները, որոնք ապրում են Կովկասի այլ և այլ քաղաքներում ու գաւառներում՝ դաշնակցին, ձուլւին մէկ միութեան մէջ։ Այն ժամանակ մեծ կը լինի նրանց ոյժը և արդիւնաւէտ՝ նրանց կռիւը գործատէրերի դէմ։

Ես տրակտատ չեմ գրում պրոֆէսիոնալ միութիւնների մասին, այլ միայն ներկայացնում եմ նրանց, իբրև մէկը դասակարգային կռւի միջոցներից։ Ցանկալի է, որ այդ միջոցը շահագործւի աշխատաւորների կողմից ըստ կարելւոյն նպատակայարմար ձևով։ Իսկ նպատակայարմարութիւնը նախ և առաջ միաբանութեան մէջ է։ Այս կամ այն պրոֆէսիոնալ միութիւնը կարող է ինքն իրեն ուժեղ լինել, հարուստ՝ իր անդամներով և դրամական միջոցներով։ Բայց նրա ոյժը կարող է հեշտութեամբ փշրւիլ մի աւելի հզօր ուժի՝ միացած կապիտալիստների գրոհից։ Այդ ահագին ու կոպիտ ոյժի դէմ՝ մի առանձին պրոֆէսիոնալ միութեան ուժերը միևնոյն է թէ „նետերը զրահաւորների դէմ“։ Ուստի արհեստակցական շարժման մի այլ կարևոր նպատակն է՝ ի մի ձուլել արհեստակցական բաժան-բաժան միութիւնները մէկ հզօր ու բազմաճիւղ միութեան մէջ։

Եւ դա միանգամայն բնական է։ Չէ՞ որ ջուլհակը, փականագործը, հիւսնը, գրաշարը և այլն ամենից առաջ աշխատաւոր են,—այսինքն մարդիկ, որոնք ծախում են

իրենց աշխատելու կարողութիւնը—և ապա միայն նրանք ջուլհակ են, փականագործ, հիւսն ու գրաշար։ Բոլոր աշխատաւորները, իբրև վարձու աշխատանքի մարդիկ, ինչ արհեստի էլ նրանք պատկանեն՝ ունեն շատ ընդհանուր կարիքներ, քանի որ բոլորն էլ տառապում են միևնոյն պատճառից,—գործատէրերի իշխանութիւնից։ Այդտեղից և բղխում է անհրաժեշտութիւնը՝ ձուլել բոլոր պրոֆէսիոնալ, արհեստակցական միութիւնները մէկ համատարած ընկերակցութեան մէջ, որ կը լինի մի տեսակ „միութիւն միութեանց“։ Այդտեղից բղխում է և անհրաժեշտութիւնը՝ մտցնել կեանքի մէջ ընդհանուր, միահամուռ ուժերով մէկ ընդհանուր աշխատաւորական քաղաքականութիւն։

Աշխատանքի այն մեծ բանակի առջև, որ համերաշխ կը լինի իր ծրագրով և տակտիքայով և որ կազմած կը լինի ամենաբազմատեսակ արհեստներից—մի այդպիսի բանակի առջև յետ կը նահանջեն և կառավարութիւնը և կապիտալիստները, որովհետև նա, այդ բանակը, կունենայ իր ձեռքում մի այնպիսի անողորմ զէնք, որպիսին է՝ ընդհանուր գործադուլը...

Այժմ, յուսամ, դիւրին է հասկանալ թէ ինչու մեր կուսակցութեան պահանջների շարքում կան և այնպիսի պահանջներ, ինչպէս՝ պրոֆէսիոնալ միութիւնների անարգել կազմակերպումն և գործադուլների ապատութիւն։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ

(ՍԱՐՀԱՏ)

1871—1907

III

1903 թուականը՝ գործունէութեան այն տենդոտ շրջանը և ընդհանուր վտանգով, սպառնալիքով լի այն տարին է, ուր արդէն բացորոշապէս զգալի էր կառավարութեան մտադրութիւնը և կատարելիք յարձակումը։ Երկու ընդդիմադիր ուժերը՝ յեղափոխական ու բռնակալական՝ կը դիտէին զիրար ու կը լրտեսէին իրենց փոխադարձ շարժումները, իւրաքանչիւրը ինք ամփոփելով իր վրայ, իւրաքանչիւրը սպասելով ազդանշանին։

Գէորգին յանձնուած էր Անտոքի պաշտպանութիւնը, ուր՝ դիրքերուն մէջ կը հսկէին հայդուկներն ու ժողովուրդը։ Պէտք էր կազմ ու արթուն ըլլալ՝ դիմաւորելու համար յանկարծական ամէն պատահար։ Սակայն հակառակ բոլոր դուշակութիւններուն, թշնամին յետաձգեց իր մտադրութիւնը աւելի պատեհ հանդամանքի։

Աշնան սկզբի ամիսներուն, Գէորգը պարտաւորուեցաւ իջնել դաշտ՝ հրահանգներ տալու, կարգադրութիւններ ընելու և դաշտի ինքնապաշտպանութեան գործը կազմաւորելու համար։ Նոր բարձրացեր էր սարը, երբ վերջին ամիսներուն լուր հասաւ թէ Տալւորիկը վտանգի մէջ է։ Աճապարեց անմիջապէս դէպի սիրելի Տալւորիկը, որուն պաշտպանութեանը համար այնքան անգամներ կռուած և իր կեանքի գնովը օգնութեան փութացած էր։ Բարեբախտաբար ոչէ լուրջ դէպք տեղի չունեցաւ և ինք թողուց Տալւորիկը ու գնաց ձմեռը Սասնոյ արևմտեան հարաւային կողմերու հայ գիւղերուն՝ Իշխանձորի, Արդկունքի, Ընկուզնակի և Հեղինի պաշտպանութիւնն ապահովելու քիւրդերուն յարձակման դէմ։ Այդ գիւղերուն բնական դիրքը և վերջնական ապահովութիւնը կը պահանջէին թողուլ իրենց վայրերը և քաշուիլ ներս, դէպի Սասուն։ Զավուշ հսկեց տեղափոխութեան և ապահով, անվտանգ յաջողցուց գաղթումը։

1904-ի Ապրիլին արդէն սկսաւ ընդհանուր յարձակումը և բռնկեցաւ Սասնոյ ապստամբութիւնը։

Զավուշը՝ ապստամբութեան առաջին օրերուն բռնած էր Իշխանձորի, Արդկունքի, ընդհանրապէս արևմտեան հարաւի շրջանը և այդ դիրքերուն պաշտպանութիւնը կ'ապահովէր. բայց երբ լսեց որ Կէլիկուզանի շուրջը թնդանօթները կորոտան, անմիջապէս քաշեց իր հետ բոլոր ժողովուրդը և վազեց դիմադրութեան կեդրոնը։

Կռուի ութերորդ օրը, Ապրիլ 19-ին՝ Անդոքի դիրքերուն պաշտպանութեան գլուխը կանգնած էր։ Հեռուէն արդէն քրդական խուժանը և կանոնաւոր զօրքը կը յառաջանար. հանդարտ ու պաղարիւն՝ թողուց թշնամին որ մօտենար, ո՛չ մէկ շարժում, ո՛չ մէկ հրացանի ձայն դիրքերէն։ Թշնամին՝ բացարձակապէս համոզուած թէ՝ իր մարդիկն են հոն սպասողները, համարձակ ու աներկիւղ մօտենալով՝ խլամական բարևը տուաւ.

—Սէլամն ալէքիմ...

Այն ատեն հրացանները որոտացին։

Բարեւին պատասխան դիրքերուն ետևէն յեղափոխական գնդակները սուլեցին, մինչ Գէորգը յանկարծակիի եկած և փախստի թշնամիին ետևէն կը պոռար.

—Ո՞ւր, ո՞ւր կուգաք. Գէորգ Զավուշին բո՞ղը...

Ապրիլ 11-էն մինչև 30, ուր անընդհատ գոռացին կառավարական թնդանօթները և կարկուտի նման ծեծեցին Սասնոյ սարերն ու ապառաժները, Գէորգը ո՛չ մէկ դադար, ո՛չ մէկ հանգիստ, ո՛չ մէկ շաբաթ ու երկիւղ ունեցաւ. վարեց իրեն յանձնուած խումբերը՝ զինուորական աներևակայելի ճարպիկութիւնով, հասաւ ամենէն տաք ու ամենէն վտանգաւոր կռիւներուն և բիւրաւոր զինուորին ու քիւրդ աշիրէթին դէմ, 19 օրւայ հերոսական դիմադրութենէ մը ետք, Անդրանիկին հետ ժողովուրդին գլուխն անցած, դաշտն իջաւ։

Այդքան զօրութեան ունայն վտանգը, մոլեգնութեան կը հասցնէր կառավարութիւնը՝ որ վարարած գազանի նման սկսաւ հալածել անընմբռնելի բայց ահաւոր բուռ մը յեղափոխականները։ Դաշտին մէջ յաջորդաբար իրարու ետևէ տեղի ունեցան Գոմերի, Կուրաւուի և Շամիրամայ կռիւները, որոնցմէ երկրորդին մէջ թշնամին ձգեց 40 զինուոր ու չէրքէզ և բաւականաչափ ռազմամթերք։ Շամիրամայ կռիւի միջոցին, որը տևեց 14 ժամ, Գէորգը հակառակորդին ամենէն ուժեղ թևին վրայ ցանեց այնպիսի ահարկու կրակ մը, որ թշնամին չը կրցաւ տոկալ ու սարսափահար նահանջեց։ Երեկոյեան մութը կոխելէն ետք արդէն քաջարի խումբը նաև կը նստէր և կը հասնէր Աղթամար։

Հայ Յեղափոխականներու „Նահանջ Բիւրոյն“ էր ասիկա, կատաւած ժողովուրդի սիրոյն համար, քանի որ այլևս դիմադրութիւնը ոչ միայն անօգուտ էր, այլև վնասակար՝ խաղաղ բնակչութեան կեանքին ու գոյքին. նամերտ ու ամէն բարբարոսութեան տրամադիր կառավարութիւնը՝ չի կրնալով գլուխ գալ յեղափոխական կուսակցին հետ, կը պատուհասէր անզէն գիւղացին և վրէժխնդրութիւնը կը յաղեցնէր՝ այրելով արտերն ու կալերը։

Աղթամարի մէջ գումարուեցաւ վերջին Զինուորական Խորհուրդը... Հեռուն ու ճակատագրին ու վատ դուշմանին հետ մեն մինակ կը մնար դժբախտ, անտէր ժողովուրդը, նորէն կը չոքէր դերութեան մութ մառախուղը որբացած սարերու գագաթներուն և մայր հողին բազմաչարչար կուրծքին վրայ։

Խումբը կը հեռանար, բայց ոտքերը առաջ չէին երթար, սրտերը անդադար կը թռչէին դէպի ետ, դէպի Սասունն ու աւերակ Տարօնը։

Այդ յուզիչ Խորհուրդին մէջ էր որ որոշուեցաւ ընկերներէն մէկը ետ դարձնել, ե՛տ, դէպի ժողովրդին ծոցը,

պան չի մատնելու համար աւերիչ յուսահատութեան ու մահաբեր ջլատումի։ Եւ այդ պարտականութիւնը սիրայօժար վերցուց իր վրայ Գէորգը՝ ինք, որուն սրտին արդէն այնքան մօտ էր որոշումը։

Երբ հաւաքած իր 17 ուղեկից ընկերները, վերջին անգամ ողջագուրեց Անդրանիկը, տասնեակ փոթորկալից տարիներու ամէն յուզումները, ամէն վրդովումները և բոլոր խոովքները ճաշակած այդ պողպատէ հոգին չի կրցաւ տառնութեամբ դիմաւորել դէպն բաժանումը և իր աչքերը թրջեցան արցունքներով։ Բայց գաղափարը՝ աւելի խանկ ու սիրելի քան ընկերը, քան զէնքի անմոռանալի եղբայրը, առաջ վարեց զինք։

Հովուռայց առագաստները շտկեցան դէպի Ախլաթ ու 17 կտրիճները անհետացան Վանայ կապոյտ ալիքներուն վրայ։

Հաղիւ անհետ եղած էին անոնք, արդէն Աղթամարը պաշարուած էր ու կըսկսէր ռմբակոծութիւնը։

Կառավարութիւնը Շամիրամայ կռիւին իսկ յաջորդ օրը ամէն տեղ հեռագրած էր ծովը խիստ հսկողութեան ենթարկել և բանտարկել հանդիպած բոլոր նաւերը։

Գէորգ անտեղեակ թշնամին կողմէ եղած այս կարգադրութեան՝ կը մտենայ նաւով Կծուակայ քարերուն։ Տղոյմէ մէկ քանին հաղիւ ոտքերնին ցամաք դրած՝ գիշերային մթութեան մէջէն դարանամուտ թիւրք զօրքերը բուռն կրակի մը կ՚ենթարկեն զանոնք։ Զավուշ՝ յանկարծակիի եկած, չի կորանցներ սակայն իր մտքին կտրուկ վճռողականութիւնը և պաղարիւնութիւնը. կը հրամայէ տղոց շուտով առաջ անցնիլ և դիրք բռնել Կծուակայ քարերուն գագաթը։ Հոս է որ պատուական, ամէն հիացումի արժանի ռազմիկ կամաւորները՝ զոհ տալով միայն մէկ ընկեր՝ Առտուրը, կը թռչին դէպի Նէմրութի լանջերը, թշնամին խլելով բաւական թւով զոհեր։ Սերոբի այս պատմական օթեւանին՝ Նէմրութի սարերուն վրայ օր մը մնալէ ետք, կ՚անցնին Մուշ։

Անլուր հարուածներուն և խստութեանց ենթակայ ժողովուրդը՝ որ ֆէտայիներու մեկնումէն ետք, անձնատուր էր եղած սև անձկութեան, ծանր թախիծի ու մնացած ինք իր դլխուն, անկարող ղեկավարելու իր բաղդը, երբ իմացաւ Գէորգի ներկայութիւնը՝ իր մէջ, իր քով ու իրեն մօտ, կրկին ունեցաւ սփոփանքի թեթև սարսուռ մը, կրկին իր հոգւոյն խորը զգաց յոյսի մը բաբախումը։ Գէորգը հոն էր —կեղեքիչներուն սարսափը։

1904 էն մինչև 1907, իր եղերական մահուան օրը՝ Գէորգի կատարած դերն ու գործունէութիւնը դուցէ ամէնէն դժուարն ու դժնդակն է քան մնացած իր բոլոր զոհաբերութիւնները։ Օր ըստ օրէ բռնութեան տակ ֆիզիքապէս ու նիւթապէս հիւծող ժողովուրդ մը՝ անխուսափելի կերպով կը դիմէր նաև բարոյական քայքայման. ոչ միայն քիւրդ ու թիւրք պէկերու, աղաներու և սպասակողներու երկաթէ ձեռքը կը ծանրանար հայ աշխատանքին, հայ օճախին ու նամուսին վրայ, այլ նոյն իսկ ժողովուրդին ծոցէն կը վիժէին այլասեռածներ, մատնիչներ ու կեղեքիչներ։ Պէտք էր ազատել իրաւազուրկ և ուժաթափ տառապողները այդ ամէնուն ժանիքէն ու կլափէն։ Իր պարտականութիւնն էր կռիվ արտաքին ու ներքին բոլոր սողուններուն դէմ, ուրոյմէ շատերուն գլուխը արդէն կրցաւ ջախջախել. յիշենք միայն ամենէն գլխաւորներէն մէկը՝ մշեցի Քէրիմ աղան՝ որ բռնութեամբ, բիրտ ուժով տիրացած էր Ալիճան հայ գիւղի ամբողջ կէսին, գերութեան ու տարապարհակ աշխատութեան մատնելով ամբողջ գիւղացիները։ Քէրիմի չարաչար մահը փրկեց ոչ միայն Ալիճանը, այլ և շրջակայ բոլոր հայ գիւղերը այդ զզուելի վամբիռէն։

Գէորգ մէկ կողմէն պատուհասելով չարագործները, միւս կողմէն իր իսկ ձեռքով՝ նպաստներ բաշխեց կարօտեալներուն, հանելով հայ աշխատաւոր ժողովուրդին նիւթական ու բարոյական կարիքներուն միանգամայն՝ որքան կը ներէին իր ուժերն ու իր միջոցները։

Գուցէ այս անզուգական հերոսին բեղմնաւոր կեանքը տակաւին թերի գիծ մը, էապէս յեղափոխական պակաս մը ունենար, եթէ զոհողութեան բաժակը չխմբդեր, եթէ իր դարշելի ոգեղութեանը մէջ չ՚արտայայտուէր ապերախտութիւնը անոնց, որոնց նուիրեց ամէն ինչ, և՛ երիտասարդութիւն, և՛ խանդ, և՛ արիւն, և՛ կեանք։ Եղան, այո՛, հայ գիւղերու ծոցէն իսկ դժնէ վատեր, որ փորձեցին քանիցս թոյնով վերջ տալ անոր անգին կեանքին։

Հալածական շարունակ, վերջին երեք տարիներու ընթացքին, չունենալով ո՛չ մէկ հանգստի օր, ո՛չ մէկ հանգստի րոպէ, ո՛չ մէկ խաղաղ քուն, բռնադատուեցաւ, ակամայ Խարսի և Ալվառինճի մէջ մղել երկու կռիւներ անպատկառ թշնամիին դէմ, առաջին կռիւին զոհ տալով Եղօն՝ ճահիճներու մէջ և երկրորդին՝ բոլոր իր ընկերները, անվտանգ մնալով ինքը միայն։

Ընկերներու բոլոր թախանձանքը ի զո՛ւր անցաւ՝ դուրս բերելու համար զինք, ատենաւոր մը համար, երկրէն, ուր արդէն առարկայ դարձած էր կառավարական բուռն հետաքննութեան ու անխնայ հալածանքի։ Ինք իր անձէն աւելի թանկ կը դնահատեր ժողովուրդին դատն ու տառապանքը և այս պատճառով հոկեց այդ դատին ու տանջանքին, կրուելով անոնց պատճառներուն դէմ տեսականապէս ու առանց զինադադարի։

Հասաւ վերջապէս սև օրը, մայիսի 27-ը։ Ռուբէնի ու 17 ընկերներու հետ իջած էր Սուլուխ. ստիպողական գործի մը առիթով, ուր հանդիպեցան նաև երկու թիւրքեր, բարեկամ ճանչցած մինչև այն տեղն ու վստահելի։

Քանի մը ժամ չէր անցած թիւրքերու մեկնումէն, երբ գիւղը պաշարուեցաւ ոստիկաններով ու զօրքով։ Սուլուխը յայտնի է իր հարթ, ռազմական ամէն դիրքէ ու յարմարութենէ զուրկ հանգամանքով։ Անխուսափելի կռիւը ըսկսաւ։ Գէորգ Զավուշ իր ծանօթ յանդգնութեամբն ու խիզախումովը դուրս եկաւ գիւղէն՝ յարձակելու ահագին բազմութեան մը վրայ ու ցրելու զայն։ Անկարելին կը փորձէր։ Դեռ կռիւին սկիզբն իսկ՝ չքնաղ հերոսը զարնուած՝ ինկաւ արդէն։ Սպաղանքցի Գալէն, նոյնքան առիւծասիրտ կտրիճ մը և վաղրեայ զինուոր, որ անբաժան ու կարծես երդուեալ ընկերն եղած էր Գէորգին, մասնակցելով անոր հետ կողք-կողքի բազմաթիւ հերոսական պայքարներու՝ տեսնելով խաւարումը Տարօնի արևուն, առաջ նետուեցաւ ինքն ալ՝ վրէժխնդրութեան մունչիւնը շրթունքներուն վրայ, բայց ճակատագրական գնդակը փուեց զինք ալ գետին, և անբաժա՛ն տարիներու դաղափարական ձգտումին ու ազատութեան մարտնչումներուն մէջ, անբաժան ու հաւատարիմ մնացին նաև երկու քաջերը մահուան իրենց ուխտին մէջ ալ։

Սասունը՝ հերձելով իր ժայռոտ կողերուն կրանիթէ արգանդը՝ վրէժխնդրութեան ու փառքի օրուան մը մէջ Ազատութեան ու Արդարութեան դժնդակ պայքարին իբրև հաստուցում դուրս ժայթքած էր այս մրրկաթև Ասպետը, որ երբէք չը գիտցաւ ամօթաբեր ընկրկումը։

Դժուար և անհնար է քանի մը էջերով և թռուցիկ տողերով գծել կեանքը մեծ նահատակին որ, անսահման անձնուիրութեամբ ու ապշեցուցիչ համարձակութեամբ մը 18 տարի առանց գէնքը վայր դնելու, մղած է քառասունէն աւելի կռիւներ յաղթական և հիանալի։ Իր վեհանձն հոգին՝ անողորմ ու անսիրտ բռնաւորների առջև և աղաւնիի պէս քաղցր իր ամէնօրեայ կեանքին ու ընկերական վերաբերմունքի մէջ՝ չէ ճանչցած ո՛չ մէկ փառասիրութիւն բացի զէնքի յաջողութենէն։ Այդ տարօրինակ հոգին տասնեակ տարիներ մշտական սարսափն եղաւ ժողովրդի բոլոր բռնաւորներուն, միւս կողմէն անսահման ժողովրդականութիւնն ու պաշտամունքը իր ետևէն քաշեց։ Որովհետև, իդէալը՝ որ առաջնորդեց իր կեանքը, այնքան սուրբ ու նուիրական էր՝ որքան իր սիրած ժողովուրդին տանջանքն ու թշուառութիւնը։

Հաւատք՝ յեղափոխական դիմադրութեան ու նուիրումը ժողովրդական դատին, ահա այն նշանաբանը՝ որուն մշտնջենաւոր հետևեցաւ իր ամբողջ կեանքի ընթացքին և որուն բոպէ մը չը մտաբերեց դաւաճանել։ Անիկա կեցաւ կրկէսին

մէջ՝ աղեղը ձեռքին ու կապարճը ուսին, կեցաւ՝ ինչպէս սպարտացին իր հայրենիքի նուիրական պարտականութեան գլուխը, և ինկաւ՝ ինչպէս օրինապահ և քաջարի զինուոր։

Ու վստահաբար Աւաքելոց վանքին մօտ, դէպի Սասուն տանող առաջին ճամբուն վրայ սգաւոր Տարօնը յարգանքով ու հիացումով ծունկի եկած անոր մահարձանին առջև, հոն պիտի դրէ դողդոջուն ձեռքերով.

„Անցո՛ղդ, գնա՛ պատմէ՝ Հայաստանի զաւակներուն, որ իր օրէնքներուն հնազանդելու համար ինկանք այստեղ“։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ

Թիւրք-պարսկական վէճը կը շարունակուի. Պարսկաստանը կրաւորական դեր մը ունի, մինչ Թիւրք զօրքերը քայլ առ քայլ առաջ կը խաղան Ուրմիոյ դաւառին մէջ. ինչպէս մեր Թղթակիցը կը տեղեկագրէ, դէպի Ուրմիոյ լիճը կը քալեն անարգել իրենց արիւնռուշտ հետքերը ձգելով ամէն տեղ. արդէն սահմանագլխէն 60 քիլոմէթր ներս մտած են և մտադիր են ձմերել այդ աղքատ և դժբախտ ժողովրդի դիւղերու մէջ, անոնց պատառ մը լեղի հայը հարամ ընելով։ Պարսկաստանը ոչ ճար ունի ոչ փուլ կասեցնելու կամ ետ մղելու այդ դժպհի և շինծու արշաւանքը, իսկ դիւանագիտական միջոցը անզօր է, որովհետև ուժ չունի ետևը։ Ռուսիա և Անգլիա, որոնք որոշ աստիճան մը երաշխաւոր են սահմանագլխի դաշնագրութեան, չեն կրցած ցարդ հակառակ իրենց կեղծ սպառնալիքներուն խօսք հասկցնել սուլթանին, որ սուտ ու շիլ պատրւակներով—հայ ֆէդայիներն ալ խառնելով գործին մէջ—կը տեղաւորուի Պարսկաստանի բարեբեր այլ թշուառցաւառներուն մէկուն մէջ, կամ նոր բացատրութիւնով „խաղաղ թափանցումի“ սկզբունքը կիրագործէ։ Կարծես ցոյց տալու, հակառակ միջազգային սկզբունքին, թէ Թիւրքիան, իհարկին, կարող է ընդարձակուիլ։ Թիւրքիան Արպատականին չմօտենար, որովհետև Ռուսիա յայտարարած է որ այդ նահանգը իր „ազդեցութեան շրջանակին“ մէջ կիյնայ։

Հազիւ գեղեցիկ Իրանը, որ երբեմն կրօնի մեծ սկզբունքները տուաւ մարդկութեան, վճռական ժէտով մը Որմիզդի լուսաւոր թագաւորութիւնը կը հաստատէր,—իբր նորութիւն իսլամական աշխարհին մէջ—յանկարծ իր անպաշտպան դրութեան մէջ հանդիսատես կըլլայ անսպասելի արշաւանքներու և նորանոր փորձութիւններու։ Պարսիկ ժողովուրդը, ափսո՜ս, չունի մեծ յեղափոխութեան խոյանքը, երբ ֆրանսական ժողովուրդը բիրերով ու ժանգոտ սուրերով, հալածեց դուրս վռնտեց օտար թշնամին, որ կը համարձակէր գալ պղծել իր ազատութեան հողը։ Իզուր, Մէճլիսը (խորհրդարանը) կամբաստանէ կառավարութիւնը որ չը կրնար պաշտպանել երկիրը։ Խաները, միրզաները անողոք և մեղկ աւատականութիւնը ծծեր են այդ սիրուն երկրի կենսունակութիւնը և ջլատեր են անոր բարոյական ուժը երկիրը փլփլած տուն մը դարձնելով, ուր քամին ամէն կողմէն ներս կը խուժէ։ Ոչ Շիր-Խուրշիդը, ոչ Ալիի մերկ դաշոյնը, չեն կրնար այս տագնապալից րոպէին զօրավիդ ըլլալ, հայրենասիրական խրոխտ թուփ մը հարկաւոր է բայց ոչ... ձեռնունայն։

Համիդ օգտուելով Պարսկաստանի անիշխանական և անպաշտպան դրութենէն, կը ժտադրէ շող մը տալ իր երեսուն տարեայ կորստաբեր և աղիողորմ թագաւորութեան—որ մահ կը հոտի,—թոյլ Պարսկաստանէն հանելով այն անթիւ ու անհաշիւ կորուստները որ այդ հերիֆը հասցուց իր երկրի գլխին։

Հողային առաւելութենէն դուրս, Եըլդզի չարագործը նպատակ ունեցած է այդ արշաւանքով, վախցնել Պարսիկները և թոյլ չը տալ որ ազատական ռէժիմը հաստատուի իսլամ երկրի մը մէջ. չէ՞ որ այդ փադիշահը, ցկնած օրէն արիւնարբու և անհաշտ և գռեհիկ թշնամին եղած է ամէն մարդկային յառաջադիմութեան, չէ՞ որ իր կեանքին մէջ լսած է միմիայն „քէօլէնիզ“ խօսքը։ Կը հաւատան որ պարսիկ բարձր դասակարգին մէջ, սուլթանը մեղսակիցներ ունի, և նոյնիսկ հազարաւոր ոսկիներ շռայլած է Պարսկաստանի մէջ, վիժեցնելու համար սահմանադրութիւնը որ խորթ կը հնչէ խալիֆայի ականջին։ Անկարելի բան չը կայ, այդ կարելիութեան աշխարհներուն մէջ։

Սուլթանի այդ յանդուգն լրբութեան ետև կեցած է Գերմանիան—ինչպէս հայկական ջարդերու ատեն—որ Թիւրքիոյ ձեռքով կուզէ իր շահերը դրստել այդ կողմերը և խայթոցներ տալ անկլօ-ռուս համաձայնութեան։ Ամբարտաւան և բռի քայլերը, որ իր աստուածանշական բարոյախօսութիւնով աշխարհի ականջները կը տաղտկացնէ, փոխանակ շնական խալիֆայի բազուկը զինելու և անոր ուղեղը գազանացնելու անմեղ, անպաշտպան ժողովրդ մը թշուառացնելու, լաւ չէ՞ը ըլլար որ անդրադառնար քիչ գերման հակագիր բարոյականին վրայ ուրկէ անյետադարձ փախչելիս, Ղսվա իր կնիկը վրայ տուաւ...։

Սակայն պարսիկ ժողովուրդը եռանդուն և նախանձելի գիտակցութիւնով մը—որ պատիւ կը բերէ իրեն—այդ տագնապին մէջէն առաջ մղեց Սահմանադրական պայքարը և յաղթանակեց։

Նոր Շահը, ե վերջոյ, վաւերացուց Սահմանադրութիւնը իր բոլոր հետևանքներով, սահմանափակեց արքայական կամայականութիւնը և հոգևորականութեան իրաւունքները, յայտարարեց նախարարներու պատասխանատուութիւնը, անձի, կրօնի, մամուլի ազատութիւնը և այլն, որոնք կը համապատասխանեն Մէճլիսի բաղձանքին։

Ալի Մէհմեդ Շահը, որ գիտէ գնահատել Խայեամի գինիի կուժերով լի քառեակները,

„Ուսպ մը գինի նոր թագաւորութենէ մը լաւ է“

ունեցաւ նաև իր ժողովուրդին սիրելի ըլլալու և զայն արդարութեան և մարդկութեան ճամբուն մէջ դնելու վեհանձն հաճոյքը և գինովութիւնը և այսպէս Իրանի խելացի և ժիր ժողովրդին տուաւ ամուր կռւանը ապագային, որ աւելի փառաւոր և տևական է քան կօզակներու հրամանատար Լիախովի կեղծուպատիր պաշտպանութիւնը։

Մէճլիսը ցարդ ցոյց տուաւ, Պահարիստանի պալատին մէջ, եռանդ և գիտակցութիւն իր երկրի շահերուն և կրօնի նախաձեռնութեան ոգի։ Պարսկաստանի կենսունակութիւնն է որ կը վերածէ։ Ռուսական դեսպանին կոպիտ և անշնորհք սպառնալիքին տրուած պատասխանը Մէճլիսի նախագահին կողմէ՝ ցոյց կուտայ որ Իրանը իր իրաւունքը և շահերը գիտէ պաշտպանել այնքան արժանապատուօրէն և այնքան հասուն քաղաքավարութիւնով մը։

Այժմ Թէհրանի մէջ 47 լրագիր կը հրատարակուի, որոնք, ամէնքն ալ հակառուսական լեզու ունին։ Բայց թէ այդքան լեզուները պիտի կրնան յղել ռուսական անուղղայ կոպտութիւնը, որ ամէն նենգ և դրուժ միջոցներ գործ կը դնէ Պարսկաստանի ազատական շարժումը խեղդամահ ընելու համար։ Շատ իրաւամբ անգլիական թերթերը խղճի խայթ կզդան, որ անգլօ-ռուս համաձայնութիւնը Պարսկաստանի մասին, մի գուցէ առիթ և ազատութիւն տայ ցարի կառավարութեան մաշամեռ ընելու Պարսկաստանի նորածին սահմանադրութիւնը։

Կը սիրենք յուսալ որ Պարսկաստանի ժողովուրդը, գովելի հայրենասիրութիւնով և անձնուէր յարատևութիւնով մը, պիտի կորէ անցնի այս պատմական ալեկոծ հրւանդանը, պիտի կրնայ կորովանալ և դուրս վռնդել արիւնարբու սուլթանին պաշտպանները, վարձկան աւազակները, պիտի գիտնայ պաշտպանել օտար ոտնձգութիւններու և ինտրիկներու դէմ իր երկրին ամբողջութիւնը և ինքնուրոյնութիւնը և պիտի դնէ „Կիւլիստանի“ երկիրը պարկեշտ աշխատութեան, և անմոլեկրօն յառաջադիմութեան ճամբուն մէջ, և իր ալիքները պիտի նետէ հեռուները սատանեցնելու անարժան գահերը, իրենց անարժան դահակալներով։

Իրանի վրէժը այդ պիտի ըլլայ Եըլդզի ոճրագործներու կառավարութենէն։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Լոնդոնում հրատարակվող անգլիական սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան ամսահանդէսը „The Social-Democrat“ անունով, իր հոկտեմբեր 15-ի համարում քաղաքագիտօրէն արտատպել է մեր այն զեկուցումը, որ Հ. Յ. Դաշնակցութեան անունից ներկայացրել էինք Շտուտգարտի միջազգ. սոց. համագումարին։ Հանդէսի խմբագրութիւնը այդ առթիւ տալիս է մի քանի համակրական մեկնութիւններ. նա հրաւիրում է իր ընթերցողների ուշադրութիւնը հայ դաշնակցական սոցիալիստների առանձնայատուկ տաքտիկայի վրայ, որ նա դիտում է իբրև մի երկաթէ անհրաժեշտութիւն հայկական իրականութեան մէջ։

„Սոցիալիզմը սրով“, “Socialisme by the sword“ —այս վերնագիրն է կրում անգլիական սոց.-դէմոկրատ հանդէսի մեզ վերաբերեալ յօդուածը, որ սկսւում է այսպէս. „Խաղաղ միջոցներով, եթէ հնարաւոր է. բռնի միջոցներով, եթէ անհրաժեշտ է—այս է սոցիալիստ ընթերցողների պատասխանը յաճախակի դրւող այն հարցումին, թէ ի՞նչպէս են նրանք ուզում հասնել նպատակին։ Այդ նոյն եզրակացութեանն էք գալիս, կարդալով այն զեկուցումը, որ ներկայացրել է Հայ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւն՝ Դաշնակցութիւնը Շտուտգարտի կոնգրէսին։ Կայ մի անկիւն երկրագնդի վրայ, ուր մեր ընկերները չունին իրենց տրամադրութեան տակ աւելի ազդու զէնք, քան սուրը“։

Համակրական շեշտով է անցնում յօդուածագիրը այն բոլոր արհաւրալի կռիւների վրայից, որ մեր կազմակերպութիւնը մղել է Թիւրքիայում և Անդրկովկասում՝ թէ բռնակալութեան և թէ անգիտակից ու վանդէական խուժանների դէմ։

—

Սուլթան Համիդ սկսած է Թրքական բանտերուն մէջ եւս մտցնել Ջարդի սիստեմը։ Տրապիզոնի բանտերուն մէջ Թիւրք բանտարկեալները—կառավարական թոյլատրութեամբ, կասկած չը կայ—դաշոյններով զինուած կը խուժեն հայ քաղաքական բանտարկեալներու խուցերը և կիսամեռ կը վիրաւորեն 17 հայ բանտարկեալներ, որոնցմէ Գուրգէն Սարգիսեան անյոյս վիճակի մէջ է, իսկ ասոր ընկերը Խարայէլեան թունաւորուած։ Նմանօրինակ արիւնհեղութիւններ վերջի տարիները տեղի ունեցան նաև Թրքական ուրիշ բանտերու մէջ ուր հայեր զոհ գացին բանտակից Թիւրք սրիկաներու յարձակումներուն։

—

Մուշի բանտին մէջ այժմ 350 հայ բանտարկեալներ կան։

—

Ռուսաստանում պետական Դումայի երրորդ ընտրութիւնները նոր վերջացան։ Ինչպէս և սպասելի էր, ձախակողմեան և նոյնիսկ ազատամիտ-սահմանադրական տարրերը պարտութիւն կրեցին։ Յունիսի 3-ի „պետական հարւածը“ և ընտրողական սիստեմի յեղաշրջումը դուրս նետեցին ընտրութիւններից աշխատաւոր ազգաբնակութիւնը և ասպարէզ հանեցին միապետականներին, աջակողմեաններին, և հոկտեմբերեաններին, որոնք և կը կազմեն երրորդ Դումայի մէջ ստւար մեծամասնութիւն։ Ցիշենք և այն, որ սոցիալիստ-յեղափոխական տարրերը (Ռուսաստանում, Լեհաստանում և Կովկասում) բոյկոտ են արել։ Կադէտները մի քանի տասնեակ ձայնով, միացած փոքրաթիւ սոց.-դէմոկրատների ու տրուդովիկների հետ՝ կը կազմեն Դումայի ձախակողմը։ Այդպիսով կատարուեց բռնապետութեան ցանկութիւնը, կազմուեց „պարլամենտի“ մի նոր այլանդակութիւն, որ կոչուած է հլու գործիք լինելու ցարիզմի ձեռքին, նրա գոյութիւնը յարատեւելու համար։ Ազատամիտ մամուլի տոնը ընկճուած է։ Բայց բոլոր օրգաններն էլ խորապէս համոզուած են, որ նոյնիսկ „աջակողմեան-հոկտեմբերեան“ Դումայով՝ ցարի կառավարութիւնը չի կարող ջնջել վերջին երկու տարւայ մեծ իրողութիւնները և վերադառնալ անցեալին։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՏԵՐՐՕՐ

Տաճիկ եւ հայ յեղափոխական կոմիտէների որոշումը, սեպտեմբերի 27-ին, Բաթում քաղաքում՝ դէպի Պօլիս գնալիս, տերրորի ենթարկուեց Վանի նախկին վալի Ա ի-ք է յ ը։ Մահը անմիջական էր։ Ահաբեկիչը ազատ է, հակառակ ոստիկանութեան ձեռք առած խստագոյն միջոցների։

ԱՀԱԲԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

ՍԱՍՏ

Մի քանի անանուն կեղծարարներ ու դրամաշորթներ, բուն դրած Պարիզ, Ժընեվ և եւրոպական այլ քաղաքներում, փորձում են շարունակել իրենց շահատակութիւնները՝ դաշնակցական անուան տակ։ Դրամաշորթների այդ խումբը նորերս դիմումն է արել Վիեննա ապրող մի հայի՝ դրամի պահանջով, սպառնալով նրան, մերժման դէպքում, մահուան պատիժ։ Իրողութիւնը հաղորդուած է Արևմտեան Բիւրոյին։

Այդ անարգ փաստի դիմաց՝ պարտք ենք համարում յայտարարել՝

1) Կազմակերպութեան Ընդհանուր Ժողովը խստիւ արգելել է սպառնական դիմումները դրամական գործում, և ուրեմն այդօրինակ փաստերը ոչ այժմ և ոչ ապագայում որևէ կապ Դաշնակցութեան հետ չեն կարող ունենալ։

2) Այն անձինք, անանուն և կեղծարար, որոնք կը փորձեն շահագործել կազմակերպութեան անունը՝ դրամաշորթութեան համար, կ'ենթարկուին, համաձայն կուսակցութեան «Կանոնագրի», խիստ պատասխանատուութեան և պատժի։

Ներկայ դէպքի մասին արդէն հաղորդուած է Դաշնակցութեան պատշաճ Մարմնին։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐ

Ատենէ մը ի վեր Պոսթընի մէջ՝ բողոքող Դաշնակցականներու խօսքեր կըլլան։

Նկատելով որ հայ հասարակութիւնը և հեռաւոր ընկերներ, անտեղեակ իրողութիւններուն, կրնան թիւրիմացութիւններու զոհ ըլլալ, պէտք կը զգանք պաշտօնապէս յայտարարելու թէ «բողոքող Դաշնակցականներ» գոյութիւն չունին ո՛չ միայն Պոսթընի այլև Ամերիկայի մեր ամբողջ շրջանակին մէջ։

Հետևաբար, անոնք որ կը խօսին ատ անունով, կեղծարարներ են և Հ. Յ. Դաշնակցութեան անունը շահագործելնուն համար՝ պ ա տ ա ս խ ա ն ա տ ու։

Հ. Յ. Դ.
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

ՅՐՁԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

(Դաշնակցութեան Պալքան. շրջանի ընկերներուն)

Ընկերներ, այս պահուն, ինչպէս օրինակները ցոյց կուտան, տրամադրութիւն մը կայ որ հնչակեան այլ և այլ հատուածներէն անհատներ դիմեն Դաշնակցութեան շարքերը։ Բնականաբար բարոյապէս իրաւունք չունինք այս կարգի դիմումներուն զոհացում չի տալ, սակայն պարագայ մը կայ, որ պէտք է խստօրէն ոկատի առնել։

Մեր տեղական մարմիններն ու ընկերները նման առիթներու տակ պէտք է չափազանց խստապահանջ ըլլան դիմումը կատարող անձին բարոյական ընթացքին վերաբերմամբ, նախապէս ստոյգ աղբիւրներէ տեղեկանալով թէ խնդրոյ առարկայ նոյն անձը՝ արդեօք զեղծումներ ունեցած չէ՞ իր պատկանած նախկին կուսակցութեան մէջ կամ յեղափոխականապէս արդար դատապարտութեան մը ենթարկուած չէ՞, իրողութիւններ՝ որոնցմով կը բացատրուի շատ անգամ մեզի դիմող անձին ներքին շարժառիթները։

Դաշնակցութիւնը բաց պէտք է ըլլայ ո՛չ թէ ամէն հանդիպած կամ այս ու այն կերպով արդէն արատաւոր մարդու առջև, այլ ուղղամիտ, ազնիւ ու ամէն կասկածէ և մեղադրանքներէ ազատ անձնաւորութեանց առջև։

Հ. Յ. Դ.
ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

ԴԻՄՈՒՄՆ

Ծառայող ընկերներ!

Ահա արդէն մի քանի տարի է, ինչ հսկայական Ռուսաստանի ամբողջ տարածութեան վրայ մղուում է բուռն պայքարը ճնշուածների և ճնշողների միջև։ Կեանքն անցնելով պատմական զարգացման որոշ ճանապարհ, մտաւ յեղափոխական շրջանի մէջ։ Նրա ընթացքը, վայրկենաբար թուլացած լինելով, այժմ հանդիսաւոր է և գեղեցիկ։ Հարստահարուած աշխատաւորները ճանաչեցին, վերջապէս, իրենց իրաւունքներն ու շահերը և միաբան ոտքի են կանգնում ի պաշտպանութիւն իրենց ընկերների, ընդդէմ բռնակալական կարգերի—որոնք ճանաչում են միայն կապիտալիստների շահերը—և ընդդէմ նոյն այդ կապիտալիստների։

Ընկերներ, ծառայողներ ամէն կարգի, դուք մի մասն էք կազմում աշխատաւորների այդ մեծ բանակի։ Ոչ մէկը ձեզնից ապահովուած չէ գործատերերի կամայականութիւնից։ Ամէն վայրկեան դուք գտնուում էք փողոց նետուելու վտանգի մէջ։ Ոչ մէկը ձեզնից չի կարող փոխել տիրող կարգերը։ Եւ սակայն ոյժը ձեր կողմն է այն օրից, երբ դուք կազմակերպուել էք արհեստակցական և կուսակցական միութիւնների մէջ։ Դուք գիտակցաբար և յամառութեամբ պաշտպանում էք ձեր գործը։ Մի գրոհ միայն բաւական եղաւ աշխատաւոր մասսաների կողմից, որպէսզի բռնակալութիւնը կորցներ գլուխը և տագնապալի վայրկեանին հրապարակ նետէր հոկտ. 17-ի մանիֆեստը՝ ազատութիւնների տարտամ խոստումներով, մի մանիֆեստ, որից նա յետոյ հրաժարուեց, յենուելով իր սուինների վրայ։ Նա փակում, ոչնչացնում է առանց այլևայլութեան իր իսկ թոյլատրած արհեստակցական անմեղ միութիւնները, հէնց որ դրանք պաշտպան են կանգնում իրենց անդամների արհեստակցական շահերին։

Բայց հեռու չէ ցասման ժամը և նա կը յենուի իր սեփական սուինների վրայ։ Այդ ժամը նախօրօք դուշակել անհնարին է։ Զգո՞յշ, ընկերներ, որպէսզի նա յանկարծակիի չը բերի ձեզ։ Իմացէք, որ աշխատանք շատ կայ և որ նա վեր է առանձին անհատների ոյժերից։ Յաղթութիւնը այնքան էլ թէական չէ և դժուար չէ ձեռք բերել այն, եթէ ծառայողները իրենք վարեն իրենց գործը և անընկիւղ ու համարձակ առաջ մղեն աշխատանքի ազատութեան կռիւը։ Ձեր ստրկացումը, ընկերներ, արդիւնք է ձեր անգիտակից ու ցիր-ցան վիճակի. դէ՞ն ձգեցէք անձնական հաշիւները և շտապեցէք շահագործել իւրաքանչիւր վայրկեանը, յօգուտ ընդհանուր գործի։

Մի՛ մոռացէք ընկերներ, որ ձեր ետքում, ստրկութիւնն է ու ճնշումը, իսկ առջևում—ազատութիւնը։ Մէկ ելք միայն կայ—պէտք է կազմակերպել գաղտնի, իլլէգալ արհեստակցական միութիւններ։ Սոցիալիստական „Դաշնակցութիւներ“, որ հսկիչ-պահապան է կանգնած աշխատաւոր մասսաների շահերին, կոչում է ձեզ համախմբուել իր դրօշակի տակ։ Առանց ժամանակ կորցնելու և առանց տատանման մտէ՛ք „Դաշնակցութեան“ արհեստակցական միութեան մէջ և դրաւեցէք ուրիշ ընկերներ։ Լաւ յիշեցէք, որքան աւելի շատ լինէք դուք, և որքան աւելի կազմակերպուած լինէք, այնքան աւելի ապահով կը լինի յաղթութիւնը։ Լաւ յիշեցէք, բոլորը—մէկի համար, մէկը—բոլորի“։

Հ. Յ. Դ.
VII ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒԱՏՈՒԹԻՒՆ

Արիւմեան Պիւրօն ստացած է,

Զ ի ց ե ր ի ա.—Նուէր Եղեւինէն 5 ֆր.։ Նուէր Լօռունից 8 ֆր.։

Ա մ ե ր ի կ ա.—Ուսերի կոմիտէն ի նպաստ „Դրօշակի“ եւ „ProՀայէնիայի 200 ֆրանկ։ Գումար 213 ֆր.։

Ասիպատակումի Կեդ. Կոմիտէն՝

Վրէժ կոմիտէի շրջան 1906 սեպտ. 1907 յուլիս վերջ։

ՎՐԷԺՈՒՄ.—Անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Վազգէն խումբ 73. 50 դրամ, Բաբգէն-Սիւնի 44, Փոխիկ 98, Սերոբ փաշա 14, վինա-կախաղ 7. 50, Ծիածան 259, Կայծակ 416, Խան Աւեթիսեան 124, Անդրանիկ 122. 40, Յառաջ 80, Շաշ 93, Փաշա 41, Սեւ Սար 25, Արիս 68, Բեռի 48, Պեսօ-Սերոբ 41, Զուլում 16. 75, Աղբիւր-Մուրաս 676, Յոյս 345, Բուժէտից 130, Երեկոյթից 1169. 95, Յերեկոյթից 219, Նուէր Ղ.-ից 6, մի ներկայացումից 802. 75։

ՍԱՐԳԱՀԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻՑ —Անդամավճարներ 347. 35։

ԱՆԽԱՀԱՆԻ ՇՐՋԱՆ.—Հանգ գիւղից, Զաքուչ խմբից 4. 25, Դուման խ. 3. 75, Երկաթ խ. 8, Զնդան խ. 2. 20, Անառիկ գիւղից, Դարբին խ. 16. 50, Արծիւ խ. 4. 5, Անդրանիկ խ. 27. 75, Սէր խ. 20, Մեր գիւղ Փարոս խ. 6, Վանգ գիւղ Պողպաս խ. 7. 20, Լանջ գիւղ Մարի խ. 8, Սարանարթ գիւղ Լեռնիկ խ. 33, Մօսին խ. 19, Կայծակ խ. 24, Կտրին խ. 33, Պասենէ խ. 35, Վա

ռանդ գիւղ Հրայր խ. 12, Վարդան խ. 19. 30, Արեւելք խ. 6, փայտակարան խ. 15, Սարգիւղ Անդրանիկ խ. 20, Երասխ խ. 8, Մասիս խ. 13:

Միանարք Կոմիտէի շրջան 1907 ապրիլ 1-ից յունիս 30

ԾԱՌԱՍՏԱՆ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ.—Անդամավճարներ՝ հետեւեալ խմբերից՝ Ուսկոկ 25. 50. Տարածող 215, Արծիւ 58, Գոլօշեան 57. 50, Ալիք 9, Միութիւն 36, Վազգէն 16. 80, Ծերունի 36, Իրաւասիրաց 12, Աւետիսեան 21:

ՓԱՅԼԱԿ ԵՆԹԱԿՕՄԻՏԷ.—Հետեւեալ խմբերից՝ Բարդուղիմէոս 65. 70, Կայծակ 7, Գերիկ 17. 50, Ցոլակ 7, Գաղտնապբեր 17. 65, Ազրիպասեան 18. 50:

ՃԱՌԱԳԱՅԹ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Բրիսափոր ա. 26. 50, Բրիսափոր բ. 108, Ասպարէզ 60. Արծիւ 26. Կարօ 38, Զօրա 78, Արիսակէս 27:

ԲԱՐԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Հարաւուլ 18, Մուշեղ 37. 50, Առիւծ ա. 16. 25, Առիւծ բ. 13, Լեւոն 46, Ծերունի 25. 50. Մարիկ 8. 50, Ալիք 25. 50, Անդրանիկ 31. 50. Արամս 18, Փայլակ 14. 50, ուէր՝ Ի Մ. 99:

ՋՕԼԱ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Ցօլակ 26. 50, Զարեւանդ 32. 50, Աղբակ 15. 75, Նամուս 49, Մարդասիրական 15:

ԺԱՅՈՒ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Հայրենիք 27, Կայծակ 15, Մասիս 15, Բրիսափոր 16. 50, Ուռուտմն 51. 50, Կրակ 10:

ՄԻՆԱՐԷ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Վարդան խումբ 27, Դուշման խ. 39, Խանասոր խ. 25. 50, Վառ խ. 27. պանանց խ. 4:

ՍԻԲԻՐԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Խմբերի անդամավճարներ 73. 50:

ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆԵՐՈՒ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ.—Անդամավճարներ հետեւեալ խմբերից՝ Դժոխք 28, Բրխա 36, Երկաթ 21. 10, № 75 հանգանակութեան թերթով 700, Ծառասանի ներկայացումից 200, ձառագայթի ներկայացումից 496, ուէր՝ Ց-ներից 2000, մի հրէայից 30.

Ընդհ. գումար 10932 դրամ 35 սանտիմ:

Պոլսոյեան Կենտր. Կոմիտէ՝

ՊՐԱՅԼԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Սրճարանի հասոյթ 705 ֆրանկ, հետեւեալ խմբերից՝ Նիհար 54, Առիւծ 24, Արարատ 54, Արձագանք 24, Անդրանիկ 39, Կարմիր լեռ 18, Ագուլ 30, Գուրգէն 36. Նուէրներ՝ Կարկուտ 5, Այծեամէ 5, Դառնիկէ 6: Գումար 1000 ֆրանկ:

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—X Սրճարանի յուշատ, փեսր, մարտ ամիսներու հասոյթ՝ 715. 40, խումբերու նոյն ամսավճարներէն—Տիկնանց Կարմիր խաչէն 83. 60, հետեւեալ խմբերից՝ Նոր Դար 45 ֆր.. Նէմրուբ 27, Վարազ 33, Արարատ 33, Հազուլ 30, Կարին 21, Ցէդայի 27, Սերոբ-Աղբիւր 21, Տարօն 15, Սեպուհ 18, Ցէդայի 24, Հազուլ 27, Նոր Դար 47, Վարազ 30, Կարին 18, Տարօն 9, Սեպուհ 15, Զինասէր 35, Արարատ 33, Սերոբ-Աղբիւր 27, Նէմրուբ 25, Տիկնանց Արամս 16. 50, Ծախած գրքերէ 15. 75, Նուէրներ՝ Պանանց 10, Սերվարտ 5, Խոսրովէ 30, Գնունիք 21, „Դրօշակի" բաժնեգին 48: Ապրիլ, մայիս եւ յունիս ամսավճարներ՝ X Սրճարանի հասոյթ 346, Տիկնանց Կարմիր խաչ 101 ֆրանկ:

ԿԱԼԱՅԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Սրճարանի հասոյթ 500 ֆր. հետեւեալ խմբերից՝ Արարատ 120, Արեգակ 50, Գայլ 81, Տարօն 48, Տալորիկ 51, Արծիւ 52, Ծերունի 98 ֆր.: Գումար 1000 ֆր.:

ՌՈՒՍՉՈՒԿԻ ԿՕՄԻՏԷ.—Հանգանակութենէ(Գիսպկէն ինաշիւ Ռուսչուգի 120 ֆր., Գիսակէ՝ ինաշիւ Ֆիլիպէի 100, № 1000 է՝ 20, Տէրտէրից 300, Սլաֆէ 10, Խաչումեան 20, Մանուկ 5, Ց. Դ. Ցոլհանիէսեան 5, Ն. Սարեանէ 20. Եղբ. X-էն 75. Դամասէէն 80, Եղբ. Բ. 50, Էմիլիայէն 100, Մանիֆաքիւր 200, Աղաւնի 200, Դանակ 100, Կ: Տէրտէրեան 5, Պ. Ց. 5, Բ. Զամրեան 10, Գրիգոր 3, Խեղիաեան 4, Ա. Վարդանեան 1, 50, Վարդանէ 3, Ալեանազ եւ Ծերունեան 10, Արշակ Փափազեան 5, Գուրգէն Գարագաշեան 2, Գրիգոր Պաղտասարեան 2, Աւագ Մարգարեան 2, Գասպար Պաղդասարեան 15, Մելքոն Գալէնդարեան 1, Ստեփան Մազմանեան 1, Սիմոն Արզումանեան 2, Ստեփան Զատուրեան 1, Ցարութիւն Խորասանեան 2, Ցարութիւն Սանակեան 1, Պօղոս Կարժանեան 1, Եղիա Ստեփանեան 1 Պօղոս Փափազեան 1, Վռամ Զազիեան 5, Համբարձում 1. 80, Ստեփան Գաբրիէլեան 1, Գրիգոր Գարագաշեան 1, Մկրտիչ Սրապեան 1, Ցարութիւն Մաղմաեան 1, Ապազեան 2, Ցովհաննէս Կարապետեան 1. 50, Միհրան Պէրպէրեան 5, Պօղոսէ 4, Սարաճեան 5, Գ. Պաստելի 5, Խորէն Մազմանեան 2, Մուշէղ Իսկէնդէրեան 2, Գէորգ Զաւուշ 1. Ոսկիան Ցակոբեան 1. Գալուստ Աւետիսեան 1, Ցովհաննէս Բարսեղեան 1, Աւետիս Ասատուրեան 1, Գասպար Էմմէնի 1. 50, Ցովհաննէս Խաչատուրեան 1. 50, Աւետիս Վարդանեան 1, Նիկողոս Մալօեան 3, Աբրահամ Ասլանեան 2, Ցակոբ Տ. Խաչատուրեան 1, Ցարութիւն Գալստեան 1, Վարդան Բալխուրեան 1, Աղանան Հարոնեան 1. Բենիկ Սիմոնեան 1, Ցակոբ Զիլինկարեան 2, Ցովհաննէս Ցակոբեան 5, ձնտ Բալխուրեան 5, Եղբ. Արարատեան 3, Սանակ Ցակոբեան 1 ֆր:

Գումար 1555 ֆր. 50 սանթ.:

(Շարունակելի)

Ոսկեհանքի Կոմիտէ՝

Հին-Գուրգէնէ 57 դրմ. Թղթախաղէ 23, Երուանդէ 1. Գ. Դ. 2, Միքօ 6, Թուչունէ 2, Բարբառէ 2, Կրակ 20. Կարօ 20, Հայրենասէր 8, Արաբացի 6, Կայծակ 20, Բարեսէր ոմն 104, Տանուտէր Խաչօ 19. Լ. Բ. 19, վիճակահանութիւն 56, Իտալական շրջան 10, Կարօ 10, Նորշան 10, Վաղինակ 29, գումար՝ 426 դրմ.:

Դահիրէի Սնթակոմիտէն՝

Ա. Պէրպէրեանի ձեռամբ (Եթոպիոյ) Ասիասպասի մէջ հանգանակած ի նպաստ երկրի կուռոյ զինուորներու եւ մաղամական բանտարկեալներու 4019 դրմ. Ասիասպասպասէն „Այծեամ", խմբի անդամավճար 292, եւ (Գահիրէ) „Անահիտ" խումբի անդամավճար 305, Արմին Վանենիի ձեռամբ „Զարթիր" խումբ անդամավճար 215, „Լոյսի" ձեռամբ Մ. Սէրէ 20, Կայծակէ, Մ. Կրակէ եւ Ծերունիէ 10 ական: Ընդհանուր գումար 4881 դինկ. ոսկ. եգիպտական:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		ֆր. ս.
1.	**Ապաստամբական ոգի** (սպառուած)	.10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառ.)	.05
3.	**Դաղանի ապարան** (սպառ.)	.05
4.	**Դիտական սոցիալիզմ. Ֆ. ԷՆԳԵԼՍ** (սպառ.)	.40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան Ծրագիր.** (Դ. տպագր.)	—
6.	**Կուկունեան խմբի արշաւանքը.** (սպառ.)	.20
7.	**Կարնոյ յիշատակին** (*Զորս հատուած*) „	.50
8.	**Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնք**	—
9.	**Գրքիչներ,** Homo homini lupus, ՎԱՐԴԷՆՍ (սպառ.)	.20
10.	**Տրիտասարդներին.** Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ. (սպառ.)	.20
11.	**Ազատութեան նահապարին.** ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.)	.30
12.	„ „ „ Բ. „	.60
13.	**Ամբոխային տրամաբանութիւն.** ԷԼԼԷՆԻ. (սպառ.)	.50
14.	**Ազատութեան նահապարին.** ՂԱՐԻԲ. Գ. „	.30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա.**	.50
16.	**Կովկասեան վէրքեր.** Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառուած)	3.—
17.	**Հայրենիքի զաղափարը.** Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառ.)	1.—
18.	**Կազմակերպական կանոնագիր.** (Բ. տպագր.)	—
19.	**Դէպի կռիւ.** Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառուած)	2.—
20.	**Յեղափոխականներ.** Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառ.)	.20
21.	**Նախագիծ Կովկասեան գործունէութեան.** (Բ. տպ.)	—
22.	Подвиги царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI	.20
24.	**Յեղափոխական դաշն.**	.20
25.	**Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնք.**	—
26.	**Կոչ Մահմէտականներին** (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase,** E. AKNOUNI	2.—
28.	**Ազատութեան նահապարին.** ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ.	.40
29.	**Մեծ մարդասպանի դէմ** (Դատավարութիւն)	.50
30.	**Վիսօճի բազէն.** ՎՅԱՐԱՆԻ.	.50
31.	**Յեղափոխականի մտքերը.** ԲՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	1.—
32.	**Հայորդիները.** ՍԻԱՄԱՆԹՕ.	.50
33.	**Սասուն-Մուշի կռիւները**	.50
34.	**Հայկական տանջանքները եւ Եւրոպան.** ԲԵՐՆՇՏԱՅՆ	.50
35.	**Մարտական հրահանգներ.** ԱՆԴՐԱՆԻԿ.	1.—
36.	**Միացէ՛ք,** կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն)	.10
37.	**Թիւրքական բանտերը.** ՄԱՐ.	.25
38.	**Քաղաքական կուսակցութիւններ Ռուսաստանում**	.50
39.	**Հայաստանը եւ Եւրոպան.** Գ. ԲՐԱՆԴԷՍ.	.20
40.	**Աղբիւր-Սերոբ** (Կենսագրական). Ս. Մ.	.25
41.	**Եւրոպացիներու կարծիքը**	.30
42.	**Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան**	—
43.	**Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր" (1907)**	—